



### ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ.- «ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՏՈՅ ՄԵՆՔ ԼՈՒՐՁ ԶԱՆԳՈՒԱԾՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՓՈՂՈՑՈՒՄ»

Ընդդիմադիր «Հանրապետու-  
թիւն» կուսակցութեան նախագահ  
Արամ Սարգսեանի յայտարարեց,  
որ ընդդիմութեան «կարծի հատ-  
ուածը» շատ շուտով կը ձեւաւորե-  
իր ծրագիրը ու հանդէս կու գայ  
յայտարարութեամբ կամ հանրա-  
հաւաքով:

«Կարճ ժամանակ յետոյ մեր  
ժողովուրդը իսկապէս խորապէս  
կը հասկնայ իր գլխին կախուած  
վտանգը, եւ մենք լուրջ գանգ-  
ուածներ կ'ունենանք փողոցում», -  
«Ազատութիւն» ռատիոկայանի  
հետ հարցազրոյցի ընթացքին յայ-  
տարարեց Արամ Սարգսեան:

«Գնալ 2007 թուականի ընտ-  
րութիւններին՝ յոյս ունենալով,  
որ այս իշխանութիւնները արդար  
ընտրութիւններ են ապահովելու՝  
ուղղակի անհետեւութիւն է», -  
ըսաւ Սարգսեան: - «Ես հակուած  
եմ, որ մեր երկրում պիտի լինեն  
արտահերթ ընտրութիւններ. նա-  
խագահական՝ մինչեւ խորհրդա-  
րանական ընտրութիւնները: Ար-  
տաքին քաղաքական եւ ներքաղա-  
քական մարտահրաւէրները լուծ-  
ման մէկ տարբերակ ունեն՝ Հայաս-  
տանի անվերապահ ժողովրդավա-  
րացման մէջ լուծումը: Իսկ ժո-  
ղովրդավարութիւնը ընտրութիւն-  
ներով ապահովել այս երկրում  
այլեւս հնարաւոր չէ»:

Նախկին վարչապետի կար-  
ծիքով ժողովրդավարացման մէջ  
է նաեւ Ղարաբաղի հիմնահարցի  
լուծումը՝ «տարածաշրջանի ընդ-  
հանուր ժողովրդավարացման եւ  
տարածաշրջանի միասնական անվ-  
տանգութեան համակարգի ձեւա-  
ւորման մէջ»:

«Եթէ խնդիրը մէկ հարցի  
մէջ լինէր, մենք յեղափոխութեան  
չէինք գնայ, բայց խնդիրը ամբող-  
ջական համակարգի մէջ է՝ սկսած  
արդար ընտրութիւններից, որը  
շատ կարեւոր է, Սահմանադրու-  
թեան հանրաքուէի կոպիտ կեղ-  
ծումներից եւ վերջացրած գազի  
գներով, սոցիալականով», - շա-  
րունակեց ան՝ յիշեցնելով նաեւ  
Ռուսաստանի նախագահի՝ օրերս  
Պաքուի մէջ ըրած յայտարարու-  
թիւնը. - «Բանը հասել է նրան, որ  
մեր երկրի ինքնիշխանութիւնը,  
մեր անկախութիւնը վտանգի տակ  
է դրուած, եւ օտար երկրի ղեկա-  
վարը օտար երկրում յայտարա-  
րում է, որ իմ երկրի նախագահին  
կանչելու է կոնսուլտացիաների:  
Սա վիրաւորանք է ինձ, սա վիրա-  
ւորանք է իմ երկրին, եւ սրանից  
ձերբազատուել է պէտք»:

Այն հարցին, թէ կարելի՞ է  
արդեօք Հայաստանի մէջ յեղափո-

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ԲՈՐԲՈՔՈՒՂ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՇԱԻՐ

Հայաստանի Ազգային ժողո-  
վէն ներս ներկայացուած բոլոր  
քաղաքական ուժերը՝ ընդդիմա-  
դիր եւ իշխանական, հանդէս եկան  
Ատրպէյճանի մէջ հակահայկական  
տրամադրութիւնները դատապար-  
տող համատեղ յայտարարութեամբ:

«Ազգային ժողովում ներկա-  
յացուած քաղաքական ուժերը  
վճռականօրէն դատապարտում են  
Ատրպէյճանում բորբոքող հակա-  
հայկական հիտտերիսի բոլոր դրսե-  
ւորումները՝ վրէժինդրական յայ-  
տարարութիւններից մինչեւ հա-  
մամարդկային մշակութային ժա-  
ռանգութեան մաս կազմող հայկա-  
կան քրիստոնէական յուշարձաննե-  
րի ոչնչացումը», - կը յայտարա-  
րեն խորհրդարանական խմբակ-  
ցութիւնները:

«Խորհրդային կարգերի հաս-  
տատման առաջին իսկ օրից Ատր-  
պէյճանին բռնակցուած հայաբնակ  
տարածքների նկատմամբ հետեւո-  
ղականօրէն կիրառուել է հայա-  
թափման քաղաքականութիւն: 1988  
թուականի փետրուարից խորհր-  
դային, ապա նաեւ անկախ Ատր-  
պէյճանի իշխանութիւնները սան-  
ձագերծեցին այս քաղաքականու-  
թեան մի նոր արիւնտ փուլ, որի

հետեւանքով լիովին հայաթափ-  
ուեցին Նախիջևանը, Դաշտային  
Ղարաբաղը, Արցախը, Գանձակը եւ  
հայկական բազմադարեայ մշակու-  
թային ժառանգութեան յուշար-  
ձաններ պահպանած այլ բնակա-  
վայրեր:

«Զանգուածային ջարդերով  
ուղեկցուող էթնիկ գտումների հե-  
տագայ ծաւալումը հնարաւոր եղաւ  
դադարեցնել միայն արցախահա-  
յութեան ինքնապաշտպանութեան  
եւ ազատագրական պայքարի շնոր-  
հիւ: Ազգերի ինքնորոշման իրա-  
ւունքի հիման վրայ իրականաց-  
ուած հանրաքուէով հուշակուց Լեռ-  
նային Ղարաբաղի անկախութիւնը:

«Ատրպէյճանի տիրապետու-  
թեան տակ մնացած հայաթափ-  
ուած տարածքներում այսօր էլ  
չարունակում եւ նոր թափ է  
ստանում հայկական ներկայութիւնը  
վկայող պատմամշակութային ար-  
ժէքների բարբարոսական ոչնչա-  
ցումը:

«Անցած տարեվերջին կա-  
տարուած պետական ոճրագործու-  
թեան՝ ատրպէյճանական բանակի  
ստորաբաժանումների կողմից Հին  
Զուղայի խաչքարերի ոչնչացման  
առիթով միջազգային հանրութեան

գուսպ արձագանքից ոգեւորուած,  
Բաքուի իշխանութիւնները ձեռ-  
նամուխ են եղել վանդալիստական  
մէկ այլ ծրագրի իրագործման՝  
հինաւուրց քրիստոնէական գերեզ-  
մանոցի ոչնչացմանը:

«Ղարաբաղեան հակամարտու-  
թեան խաղաղ կարգաւորմանն ուղղ-  
ուած ջանքերը պարբերաբար բախ-  
ւում են Ատրպէյճանի դրսեւորած  
անհանդուրժողական դիրքորոշմա-  
նը: Տպաւորութիւն է ստեղծուում,  
որ վերջինս մոլորութեան մէջ գցե-  
լով միջազգային հանրութեանը, ժա-  
մանակ է ձգում իր հայատեաց  
ծրագրերի իրականացման համար:

«Բարձր գնահատելով Եւրա-  
խորհրդարանի բանաձեւը, որը դա-  
տապարտում է ատրպէյճանական  
վանդալիզմի ու հայատեացութեան  
դրսեւորումները, միջազգային  
կազմակերպութիւններից ակնկա-  
լում ենք նման երեւոյթների նկատ-  
մամբ հանդէս բերել աւելի վճռա-  
կան դիրքորոշում՝ յանուն տարա-  
ծաշրջանում հակամարտութիւն-  
ների լուծման եւ խաղաղութեան,  
համերաշխութեան ու փոխադարձ  
հանդուրժողականութեան հաստատ-  
ման», - ըսուած է յայտարարու-  
թեան մէջ:

### ԱՐՏԱԻԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԵՈՐՃ ՅԵՏՈՅԻ ՄԱՏԻ ՓԱԹԹՈՅԸ



ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Կիրակի փետրուար 26, 2006-  
ին, ՀԲԸՄ Արտաւազդ Թատերա-  
խումբը բեմադրեց համբաւաւոր  
ֆրանսացի կատակերգակներէն 1900  
- ական թուականները բնութագ-  
րող «La Belle Epoque»-ի խորհր-  
դանիշ եւ քառասուն կատակերգու-  
թիւններու հեղինակ՝ Ճորձ Ֆետոյի  
(1862-1921) Մատի Փաթթոց եր-  
գիծախաղը, բեմադրութեամբ՝ տա-  
ղանդաշատ դերասան ու բեմադ-  
րիչ՝ Գրիգոր Սաթամեանի: Զեռ-  
նարկը տեղի ունեցաւ համանուն  
միութեան կեդրոնէն ներս, եւ պի-

տի ներկայացուի մինչեւ Ապրիլ 2  
«Արտաւազդ» թատերասրահի մէջ,  
Փաստենա: Միջակեալ դիտել  
տանք, որ այս ձեռնարկը նուիր-  
ուած է Արտաւազդ Թատերախում-  
բի կազմութեան փառաւոր 25  
ամեակին եւ այդ գծով, ՀԲԸՄ-ի  
100-ամեակին, որ ծրագրուած է  
աշխարհով մէկ նշել արժանավայել  
հանդիսութիւններով:

Մեր արդի թուականներէն  
աւելի քան մէկ դար առաջ՝ տիրող  
ֆրանսական բարձր, այլապէս, այ-  
լասեուած իշխանական խաւի ընկե-

### ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ՝ ԱՐԱ ԳԵՈՐԳԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ Է ԱՈԱՆՑ ԻՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ



Երգահան Արա Գէորգեան

Իտալական թորինո քաղա-  
քին մէջ վերջերս աւարտած ձմեռ-  
նային Ողիմպիական խաղերուն՝  
գեղասահքի մրցումներու ժամա-  
նակ հնչել է նաեւ հայ կոմպոզիտոր  
Արա Գէորգեանի երաժշտու-  
թիւնը:

Երգահանը «Ազատութիւն»  
ռատիոկայանին տեղեկացուցած է,  
որ իր երաժշտութիւնը տարբեր  
մրցումներուն օգտագործած են  
շուէտ, պուլկարացի, ուկրաինացի,  
ուրս, վրացի եւ հրեայ գեղասա-  
հորդներ:

Գէորգեան պատրաստակա-  
մութիւն յայտնած է անվճար  
տրամադրել երաժշտութիւնը,

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՊՈՒՏԻՆ-ՔՈՉԱՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՅԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ Է

Սյսպէս են կարծում փորձագէտները ե՛լ Հայաստանում, ե՛լ Ատրպէյճանում

Մինչ ՀՀ պաշտօնական աղբիւրները ձեռնպահ են մնում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Ռոբերտ Բոչարեանին ԼՂ հարցով խորհրդատուական հանդիպման հրաւիրելու մասին, օրերս Պաք-ում արած յայտարարութիւնը մեկնաբանելուց, ատրպէյճանցի քաղաքագէտները փորձում են կանխատեսել, թէ արդեօք Ալիեւ կրտսերն ու Պուտինն ինչ-որ համաձայնութեան եկե՞լ են Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ:

Ատրպէյճանական «Էխօ» թերթի մատուցմամբ, քաղաքագէտ Հիքմէթ Հաջիգադէն ռուս-ատրպէյճանական յարաբերութիւններում արմատական փոփոխութիւններ չի ակնկալում եւ յոյս չունի, որ Ալիեւն ու Պուտինը պայմանաւորուածութիւններ ունեն ԼՂ հիմնախնդրի շուրջ: Ըստ նրա, «ամբողջ ինդիքն այն է, որ Ռուսաստանն ուզում է ամբողջովին վերականգնել իր ազդեցութիւնը նախկին ԽՍՀՄ տարածքում, ուստի՝ նրա նախկինում ունեցած բոլոր պահանջները մնում են ուժի մէջ: Օրինակ՝ ամերիկացիները գալիս ու ասում են, որ ուզում են Ատրպէյճանում նաև շահագործել, ապրանքներ վաճառել: Իսկ ռուսները պնդում են, որ այդ ապրանքներն իրենցն են լինելու, իսկ ամերիկացիները այստեղ գործ չունեն: Բացի այդ, Ատրպէյճանի սահմանները պէտք է պաշտպանեն ռուս զինուորները, Ռուսաստանի ռազմական բազաները պէտք է վերադառնան Ատրպէյճան, եւ Ատրպէյճանը պէտք է մտնի ԱՊԿ կոլեկտիվ անվտանգութեան համակարգ»: Հաջիգադէի կարծիքով, Բոչարեանին Մոսկուա հրաւիրելով՝ Կրեմլի տերութիրականն ուզում է սպաւորութիւն ստեղծել, թէ, իբր, ԼՂ հիմնախնդրի կարգաւորման շուրջ բանակցութիւնների հերթական փուլ է անցկացնելու: «Դա ինչ-որ բան փոխելու անկեղծ ցանկութիւն չէ: Ես այդ հանդիպումից ոչինչ չեմ սպասում: Հասկանալի է, որ ամէն ինչ այդ բանակցութիւններում կախուսած է Ռուսաստանից, իսկ Ռուսաստանը փոխանակ հակամարտութեան լուծմանը նպաստելու՝ աջակցում է Ղարաբաղին, Օսեթիային, Աբխազիային, Մերձդնեստրին: Այնպէս որ, փոփոխութիւններ սպասել առայժմ պէտք չէ»:

Ատրպէյճանի Միլի մեջլիսի պատգամաւոր Մ. Միրզազադէն իր հերթին զգուշաւոր լաւատեսութիւն է յայտնել Մոսկուայում Պուտին-Բոչարեան հարաւոր հանդիպման առնչութեամբ. «Հնարաւոր է, որ ԼՂ հիմնախնդրի խաղաղ լուծման իրագործման մասին լուր կը լսուի Մոսկուայից, այլ ոչ թէ աշխարհի որեւէ այլ անկիւնից»:

Հայաստանեան քաղաքական փորձագէտները առայժմ ձեռնպահ են մնում այդ հրաւերն ու դրա հեռանկարները վերլուծելուց:

«Ռազմավարական հետազօտութիւնների ազգային կենտրոնի» փորձագէտ Ստեփան Սաֆարեանը մեր ինդրանքով անդրադառնալով Պուտինի հրաւերի հնարաւոր պատճառներին՝ ասաց. «Իմ գնահատմամբ, բաւականին նուրբ տեխնոլոգիաներով Արեւմուտքը հասկացրել է Ռուսաստանին, որ ԼՂ հակամարտութեան կարգաւորումը

չլինելու հանգամանքը, դրա ձգձգումը ամենեւին էլ չեն բխում Ռուսաստանի շահերից, եւ Պուտինը դա հասկացել է: Մինչեւ հիմա Ռուսաստանն, իրօք, փորձում էր ամէն կերպ ձգձգել հակամարտութեան կարգաւորումը, բայց հիմա նրան ձեռնառու է այդ հարցում որոշակի լուծում գտնելը, որի շրջանակներում ՌԴ-ն կը կարողանայ ամրագրել սեփական շահերը, օրինակ՝ հակամարտութեան գօտում տեղակայուելիք խաղաղապահ ուժերում ՌԴ-ի ներկայացուածութիւնը, կարգավիճակի հարցում այնպիսի տարբերակ գտնելը, որը հնարաւորութիւն կտայ Ռուսաստանին հաւասարակշռել Հայաստանին եւ Ատրպէյճանին՝ հաւասարապէս չնեղացնելով նրանց ու

« Սրացումները Վրաստան-Ռուսաստան յարաբերութիւններում, Վրաստանից ռուսական բազաների դուրսբերման վտանգը, Իրանի վրայ ճնշումները սպառնում են Ռուսաստանին դուրս մղել մեր տարածաշրջանից»

չկորցնելով իր ազդեցութիւնն այդ երկրները իրայց»:

Ստ. Սաֆարեանի համոզմամբ, վերջին գարգացումները մեր տարածաշրջանում, յատկապէս սրացումները Վրաստան-Ռուսաստան յարաբերութիւններում, Վրաստանից ռուսական բազաների դուրսբերման վտանգը, Իրանի վրայ ճնշումները սպառնում են Ռուսաստանին դուրս մղել մեր տարածաշրջանից, ու հիմա ՌԴ-ն փորձում է ԼՂ հարցի լուծման նախաձեռնութիւնն ինքը ստանձնել՝ իր ազդեցութիւնը Հարաւային Կովկասում վերջնականապէս չկորցնելու համար:

«ԼՂ կարգաւորման առումով ՌԴ շահագրգռութիւնը որոշակիօրէն պայքանաւորուած է նրանով, որ հակամարտութիւնների կարգաւորումը չլինելու հանգամանքը տարածաշրջանի երկրներին ետ չի պահում դէպի Արեւմուտք գնալուց: Արեւմուտքն ինքն է հարկադրում ՌԴ-ին սեփական նախաձեռնութիւն դրսեւորել գոնէ ԼՂ ինդրի կարգաւորման հարցում, որովհետեւ եւ ԱԶԿ ՄԽ շրջանակներում նրա մասնակցութիւնը այլեւս բաւարար չէ իր ազդեցութիւնը երկու երկրներում պահելու համար: ՌԴ-ն հիմա փորձում է սեփական դերակատարումը մեծացնել»:

Ինչ վերաբերում է Ռ. Բոչարեանի՝ Պուտինի հրաւերն ընդունել-չընդունելուն, ապա փորձագէտի դիտարկմամբ՝ «Բոչարեանը հիմա փակուղում է, ու դրա մասին վկայում է ԼՂՀ նախագահի յայտարարութիւնը: Կարծում եմ, Բոչարեանը չի կարող ընդունել Պուտինի հրաւերը եւ, ամենայն հաւանականութեամբ, հանդիպման չի գնա: Եթէ անգամ գնա էլ, չի համաձայնի այն պայմաններին, որոնք նրան կարող են առաջարկել Մոսկուայում»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ «ԱՌԱՌՕՏ» 2-25-06

ՌՉ, ՄԵՆՔ ԶԵՆՔ ԳՆԱԼՈՒ

Երբ կարգացի «Իրաւունք» թերթի անցեալ տարուայ թիւ 93-ում տպագրուած Ձեր «Ելք Հայաստանից» բանաստեղծութիւնը, ես՝ 67-ամեայ այրս, ակամայից արտասուեցի: Ես՝ նուաստս, կարողանում եմ մտնել Ձեր բառ ու տողի մէջ, հասկանալ այդ ինչքան եք մտահոգ, վիրաւորուած, այդ ինչքան ծանր եւ դժուարին է Ձեզ համար հաշտուել այն մտքի հետ, որ մեր սեփական երկրում ապրում ենք այնպէս, որ այլեւս այստեղ ապրել չենք կարող, եւ Դուք աղերսում եք Հայկ Նահապետին, որ մեզ մի երկրորդ անգամ նոր անիւր տանի եւ Նահապետը մի հնար գտնի, որ մեզ հետ տանենք մեր Արարատը, Արագածը, չքնաղ Սեւանը, մատենաները, տանենք մեզ հետ մեր Հայաստանը: Ես Ձեզ լաւ եմ հասկանում, բայց արդեօք կը կարողանայ՞ք Արարատի համար գտնել աւելի յարմար տեղ, եւ Մեծն Շիրազը նոր տեղում կը կարողանայ՞ բարձրանալ Մասիսի գագաթը, որ այնտեղից թքի սրանց պղղծ ճակատին: Մեծն Մաշտոցը թոյլ կտայ՞, որ իր գանձարանից տանենք մատենաները, թէ Մաշտոցին մատենաներով ենք տանելու: Ձէ, ես համաձայն չեմ: Մենք չենք գնալու, մենք ապրելու են եւ արարելու:

Մեր երկրում 2,5 միլիոն բնակիչ չունենք, որտեղի՞ց կարողացան այդքան ընտրելու իրաւունք ունեցող գտնել եւ 1,5 միլիոն ընտրողների մասնակցութիւն ապահովել եւ 93% «այո»-ներ նկարել: Այս հանրաքուէն անցկացնելով՝ կրկին անգամ ապացուցեցին, որ տաղանդաւոր գեղծարարներ են, անտաղանդ նկարիչներ, ինչպէս իրենց անյազ փորներն են լցնում, այնպէս էլ փոքրիկ քուէատուփերը լցրին եւ յոխորտում են, թէ ընդդիմութիւնը ջախջախիչ պարտութիւն կրեց: Ընդդիմութիւնը յաղթեց: Այդ դուք պարտուեցիք: Պարոն Բոչարեանը շատ է ակնարկում, որ Հայաստանում տղամարդ չկայ: Իսկ մէջք ջարդող Սերժ Սարգսեանը բացարձակ յայտարարում է՝ 300 միլիոն դոլար պատրաստ է ծախսել ապահովելու իր եւ իր թիմակիցների յաղթանակը: Այդ ի՞նչ յաղթանակ էք ապահովում, այդ ո՞ւմ փողերով, այդ որտեղի՞ց ձեզ այդ փողերը: Ձէ՞ որ 300 միլիոն դոլարը մեր Հայաստանի 2005թ. բիւջէի 50%-ն է կազմում: Հա՛, ինչո՞ւ ես հարցնում, չէ՞ որ երկրի ունեցուածքը արդեն փայփայ էք արել:

Մեր իշխանական բուրգը նման է կոռուպիայի ենթարկուած ջրի խողովակի, որը, եթէ չփոխարինուի նորով, կ'ենթարկուի մեծ վթարի եւ անկանխատեսելի հետեւանքներ կ'առաջացնի: Պարոն Բոչարեան, գոնէ մէկ անգամ Ձեր ասած տղամարդը եղէք, ցուցաբերէք խոհեմութիւն. ինչպէս առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, հրաժարական տուեց այնպէս էլ Դուք հրաժարական տուէք: Առէք Ձեր թալանը ու աթոռը, գնացէք Ղարաբաղ շենացնելու, եթէ, իհարկէ, այնտեղ կ'ընդունեն: Բոչարեանները կարծես անիծել են մեր հայ կանանց արգանդը: Ձեն ծնում Աբովեան, որ այսօրուայ «Վէրք Հայաստանին» գրի, Պոռչեան ծնուի, որ այսօրուայ «Հացի ինդիքը» գրի, Դեմիրճեան ծնուի, որ այս քաջագարներին ներկայացնի, Բաֆֆի ծնուի, պատմավէպ գրի: Մառ, Լէօ ծնուեն, որ վերձանեն

այս անամօթ պատմութիւնը ու մեր ապագայ սերունդները իմանան՝ ովքեր են սրանք:

Մեր ազգի պարծանք, աստղագիտութեան աշխարհահռչակ նորարար, Նիւտոնի թիկնոցակիր ակադեմիկոս, ակադեմիայի պրեզիդենտ մեծն Վիկտոր Համբարձումեանը այն պատկառելի տարիքում հացադուլով իր բողոքն արտայայտեց գորբաչովեան ռեժիմի դէմ՝ իր կեանքը վտանգելով: Իսկ այսօր նրա համեստ աթոռը դահ դարձրած բազմել է Ֆաղէյ Սարգսեանը եւ Բոչարեանի սազն է նուագում: Բա ո՞վ պէտք է մտածի ազգի մասին, եթէ ոչ ինքը:

Յանկանուծ էի միտքս աւարտել լաւատեսութեամբ, բայց չկարողացայ՝ չիշելով 1890-1920թթ. թուրքերի կողմից կատարած ցեղասպանութիւնը: Հայերին քշում էին Տէր-Ջորի անապատ մասաչուսեան սպանդ կազմակերպելու, իսկ ովքեր թուրքի յաթաղանից մազապուրծ եղան, սիւռուցիին աշխարհով մէկ: Կատարողները թուրքերն էին: Ամենասարսափելին հայի ձեռքով կատարած եղեռնն է: Հայաստանը հայաթափում են, մաքրում են բնիկներից «Հայաստանը՝ եկուորներին» կարգախօսով: Ես դալտոնիկ եմ, այս եղեռնի համար գոյն չեմ գտնում: Այս ի՞նչ եք անում, այ անասուածներ: Ինչպէ՞ս եք կրելու այս խարանը: Ձէ՞ որ այդ խարանից արիւն է կաթում: Մեր ընդդիմութիւնն էլ ամէն կտորելու: Ո՛չ անհնազանդ կկուտ է ձագը ներքեւ ձգում, ո՛չ էլ իրենք ծառն են կտրում: Ո՛չ, այդպէս չի լինում: Մենք պէտք է ծնենք Վարդան, որ գորքի գլուխն անցնի, եւ Առաքել, որ ժողովրդի գլուխն անցնի:

ԷԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ «ԻՐԱՌՈՒՆՔ» 2-28-06

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ ԿԱԶՂԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Գեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104



ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՆՑ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԽՈՒՋԱՐԿԵԼ ԵՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԻ ՏՈՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Փետրուարի 28-ին առաւօտեան ժամը 11:00-ին ԱԺ պատգամաւոր, ՕԵԿ անդամ Գագիկ Աւետեանի տուն են ներխուժել 6-րդ վարչութեան աշխատակիցները եւ խուզարկել բնակարանը, ձեռնադրել՝ յայտնաբերելու պատգամաւորի նախկին բիզնեսի հետքերը: Այսօր ստուգումներ են անցկացուել նաեւ պատգամաւորների ձեռներէջ հարագատների օբիեկտներում: «Հիւրերի» պատճառաբանութեամբ, իրենց հետաքրքրել է Գագիկ Աւետեանի մինչեւ պատգամաւոր ընտրուելը, այսինքն՝ մինչեւ 2003 թուականը ծառայած ձեռնարկատիրական գործունէութիւնը: Պատգամաւորը զբաղուել է աւտոմասերի ներկրմամբ:

Գագիկ Աւետեանը կարծում է, որ դա ոչ թէ կապուած է «վաղուց դադարեցուած իր գործունէութեան հետ, այլ սեփական կարծիքի, մասնաւորապէս, Բուզանդի փողոցի բնակիչների հարցով ՄԴ դիմողների ցուցակից իր ստորագրութիւնը ետ չվերցնելու հետ»: «Սեփական կարծիքի համար պատգամաւորին ճնշում են», - ԱԺ ամբիոնից այսօր յայտարարեց նա:

Իր տունը խուզարկողների հետ գրոյցից պատգամաւորը հասկացել է, որ նրանց ուղղորդել են «վերեւները» ու բացի այդ լսում են իր հեռախոսները: Պարոն Աւետեանը յայտարարեց, որ եթէ շարունակուեն նման անօրինական գործողութիւններն իր, իր հարագատների, իր բարեկամների դէմ, ապա ինքը ստիպուած կը լինի մամուլի ասուլիսներ հրաւիրել եւ կոնկրետ անուններ յայտարարել, որոնցով պէտք է զբաղուի 6-րդ վարչութիւնը կամ «վերեւները»: Մասնաւորապէս, նա յոյս յայտնեց, որ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹԻՒՆԻՑ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Դատարանները վախենում են դատախազութիւնից եւ շատ անգամ առանց քննարկելու հաստատում են խափանման վերաբերեալ դատախազութեան միջնորդութիւնները», - այսօր նման յայտարարութիւն է արել Փաստաբանների պալատի նախագահ Ռուբէն Սահակեանը եւ աւելցրել, որ մասնաւոր գրոյցներում էլ չքննարկուած են, «թէ իրենք ի՞նչ կարող են անել, եթէ դատախազութիւնը պահանջում է»:

«Սա տրադիցիա է, խորհրդային ժամանակներից մնացած վատ տրադիցիա», - ասաց Ռուբէն Սահակեանը՝ պատասխանելով «Ա1+»-ի հարցին, թէ ինչով է պայմանաւորուած դատարանների վախը՝ դատախազի անձով, թէ՞ համակարգի անկատարութեամբ:

Նկատենք, որ Փաստաբանների պալատը Բուզանդ փողոցի բնակիչների պաշտպան Վահէ Գրիգորեանի դէմ իրաւապահների գործողութիւնները դատապարտող յայտարարութիւն առաջով չի արել: Մեր հարցադրմանը պատասխանելով՝ Ռուբէն Սահակեանն ասաց, որ իրենք պէտք է Վահէ Գրիգորեանի նկատմամբ յարուցուած քրէական գործը մանրամասն ուսումնասիրեն, ապա յայտարարութիւն կ'անեն: Սակայն այսօր նա պատրաստ է

գլխաւոր դատախազը կը հետաքրքրուի այն հարցով, թէ ինչու է 6-րդ վարչութիւնը զբաղուած օրէնքով իրեն չվերապահուած գործառնութիւններով. «Թող այդ վարչութեան աշխատակիցները գնան ստուգեն նրանց, ովքեր միլիոններ են կուտակել անօրինաբար»: Ըստ պատգամաւորի՝ ինքը թոյլ է տուել խուզարկել իր տունը, որպէսզի իր ձեռքում ունենայ դրա անօրինականութեան մասին վկայող արձանագրութիւնը:

Գագիկ Աւետեանի յայտարարութիւնից յետոյ էլ թոյլ ունեցած «Արդարութիւն» խմբակցութեան պատգամաւոր Գրիգոր Յարութիւնեանը նկատեց, որ երբ ընդդիմադիրները ԱԺ մեծամասնութեանն ասում էին, որ Հայաստանում բռնապետութիւն է՝ չէին ընդունում, բայց փաստն այն է, որ պատգամաւորի հետ վարուել են այնպէս, ինչպէս՝ առանց դատարանի որոշման, իրաւունք չունէին ոչ մէկի հետ վարուել:

Բուզանդի բնակիչների հարցով ՄԴ դիմելու նախաձեռնողը՝ «Արդարութիւն» խմբակցութեան պատգամաւոր Վարդան Մկրտչեանն այսօր յայտարարութիւնների ժամին անդրադարձաւ նոյն խնդրին եւ զարմացաւ, թէ ինչու է ԱԺ մեծամասնութիւնը վախենում այս հարցից, եթէ իրօք համոզուած է, որ օտարման գոտու վերաբերեալ որոշումներն օրինական են: Իսկ «Ազգային Միաբանութիւն» խմբակցութեան անդամ Արթուր Արշակեանը հետաքրքարեալ հարց տուեց՝ ի՞նչ տարբերութիւն Բուզանդի բնակիչների համար, թէ ով է իրենց վտարում՝ Սումգայիթի խոժա՞նը, թէ՞ հայրենի հարկադիր կատարողները:

բարձրաձայնել, որ փաստաբանի նկատմամբ կալանքը որպէս խափանման միջոց կիրառելու համար դատարանը բաւարար հիմքեր չի ունեցել:

«Զկային հիմքեր նրան կալանաւորելու. նա չէր խոչընդոտելու քննութեանը, չէր ազդելու նախաքննական մարմնի վրայ», - յայտարարեց Ռուբէն Սահակեանը: Նա նաեւ նկատեց, որ դատախազութիւնը մերժել է փաստաբանների պալատի խորհրդի խնդրանքը՝ երաշխաւորմամբ կամ գումարային գրաւով կալանքից ազատելու վերաբերեալ:

Ռուբէն Սահակեանը զայրոյթով հարց է ուղղում. էլ ո՞ւմ համար են օրէնքով նախատեսուած խափանման միւս միջոցները՝ գրան ու երաշխաւորութիւնը: «Դրանք կիրառուում են եզակի դէպքերում, եւ եթէ ուսումնասիրութիւն կատարէք ու տեսնէք, թէ ում նկատմամբ է նման խափանման միջոց կիրառուում, կը հասկանաք, թէ ինչու է կիրառուում», - ասաց Փաստաբանների պալատի նախագահ Ռուբէն Սահակեանը:

Ի դէպ, նրան զայրացնում է նաեւ փաստաբանների նկատմամբ տարբերակուած մօտեցումը. «Իսկ երբ քննիչներն ու դատարաններն են օրէնք խախտում, ինչո՞ւ նրանց չեն կալանաւորում»:

ՅՐԱՆԴ ԽԱՉԱՏՐԵԱՆԸ ԶԻ ԴԱՌՆԱՅ ՏԵՂԱԿԱԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՍԻՄ նախագահ Հրանդ Խաչատրեանը ոչ մի դէպքում չի համաձայնուի դառնալ Օմբուդսմենի (Մարդի իրաւունքների պաշտպան) տեղակալ, թէեւ կարծում է, որ դա փոքրամասնութեան եւ մեծամասնութեան միջեւ կոնսենսուսի հասնելու հիանալի առիթ է: Հրանդ Խաչատրեանը յայտարարեց, որ չի ցանկանում ասանափակել պատգամաւորի իր լիազօրութիւններն ու շարունակեց ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանի խօսքերը մէջբերելով. «ընդգծուած համեստութիւնն ամենամեծ անհամեստութիւնն է»:

Ըստ պատգամաւորի՝ շուրջ 15 իրաւապաշտպան, օրինակ՝ Աւետիք Իշխանեանը, Արտակ Զէյնալեանը, Արթուր Սաքունցը, որոնք հեղինակութիւն են վայելում, կարող են զբաղեցնել Մարդու իրաւունքների պաշտպանի տեղակալի պաշտօնը:

Հրանդ Խաչատրեանն իր բաւերով «փափուկ վայրէջք կատարեց լրագրողների առաջ»՝ գնահատականներ տալով խորհրդարանում Մարդու իրաւունքների պաշտպանի ընտրութեանը, ինչպէս նաեւ առաջարկութիւններ ներկայացնելով: Ըստ նրա՝ Մարդու իրաւունք-



ՍԻՄ ՆԱԽԱԳԱՅ ՀՐԱՆԴ ԽԱՉԱՏՐԵԱՆ

ների պաշտպանի ընտրութիւնը 3 փուլով էր. հակադրութիւն, ռոմանտիկ երկխօսութիւն եւ «դարձի շրջան»: 3 փուլերում էլ, ըստ նրա, եղել է մի աներեւոյթ անձնաւորութեան՝ Ռոբերդ Քոչարեանի ազդեցութիւնը: Հրանդ Խաչատրեանը լրատուամիջոցներին կոչ արեց պաշտպանել այն պատգամաւորներին, որոնք իրեն պաշտպանելու համար այսօր ճնշումների են ենթարկուել, սակայն այդպէս էլ չնշեց ոչ ճնշողների անունները, ոչ էլ ճնշման դրսեւորումները:

ՆԱԽԱԳԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՅՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՈՒԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ռոբերդ Քոչարեանն հրամանագիր է ստորագրել նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշէս Թումանեանին՝ իր դիմումի համաձայն, այդ պաշտօնից ազատելու մասին: Օրերս Թումանեանը յայտարարել էր նոր կուսակցութիւն ստեղծելու մտադրութեան մասին: Նախագահի խօսնակ Վիկտոր Սողոմոնեանը «Ազատութիւն» ռադիոկայանի խնդրանքին ի պատասխան չցանկացաւ մեկնաբանել Արտաշէս Թումանեանի հրաժարականի պատճառները:

Մինչդեռ իր հրաւիրած վերջին ասուլիսներում, պատասխանելով լրագրողների հարցերին, թէ ինչպէս է նախագահ Քոչարեանը վերաբերում հանգամանքին, որ իր աշխատակազմի ղեկավարը պատ-

րաստուած է կուսակցութիւն ստեղծել, Վիկտոր Սողոմոնեանը փոխանցել է, որ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտօնը, եւ ընդհանրապէս ամբողջ աշխատակազմը, կուսակցականացուած չեն լինելու:

«Ոչ մի կուսակցութիւն նախագահի աշխատակազմի ռեսուրսներից չի օգտուելու, նրա անունը չի օգտագործելու՝ քաղաքական կուսակցական նպատակներով», - ասել է խօսնակը:

Արտաշէս Թումանեանը «Նոր երկիր» կուսակցութեան նախաձեռնող խմբի ղեկավարն է: Կուսակցութեան ծրագիրը օրերս հրապարակուել է մամուլում: Կուսակցութեան հիմնադիր համագումարը նախատեսուած է մարտի 18-ին:

ՔՈՉԱՐԵԱՆՆ ՈՒ ԱԼԻԵԼԸ, ՌԱՄԲՈՅԵՆՈՒՄ ՇԱՏ ԼՈՒՐՁ ԵՒ ԽՈՐԸ ԲԱՆԱՎԵԾ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Այս մասին «Ամերիկացի ձայն»-ի ռուսական ծառայութեանն ասել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիւարտ Մաննը: «Մենք պայմաններ ստեղծեցինք, որպէսզի նախագահները լուրջ եւ խորը բանավէճ ունենան, եւ ջանում էինք, որպէսզի նրանք համաձայնութեան գային: Ընդհանուր առմամբ բանավէճը շատ ինտենսիվ էր», - ասել է ամերիկացի համանախագահը: Ըստ Սթիւարտ Մաննի, Ռամբոյէի բանակցութիւնները, սակայն, չափազանց բարդ են եղել, ու թէեւ Հայաստանի, Ատրպէյճանի նախագահները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Ռամբոյէ են գնացել՝ նպատակով, որ լուծելու են ԼՂ հակամարտութեան առանցքային հարցերը, դա նրանց չի յաջողուել:

Սակայն ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահ յայտարարել է, որ պէտք է առաջ շարժուել Լեւոնայի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման համաձայնագիրը կնքելու ուղղութեամբ,

ինչպէս նաեւ նշել է, որ 2006 թուականը այդ առումով շատ կարեւոր տարի է: «Դեռ ուշ չէ: Մենք պարտաւոր ենք որոնել ղարաբաղեան հակամարտութեան լուծումը, քանի որ այն հումանիտար աղէտ է եւ լուրջ խնդիր տարածաշրջանային անվտանգութեան առումով: Մենք պէտք է շարունակենք աշխատել այդ ուղղութեամբ: Սակայն ամենակարեւոր քայլն այստեղ երկու կողմերի քաղաքական կամքն է: Երբ ես ասում եմ «քաղաքական կամք», ի նկատի ունեմ կամք, որը ներառում է փոխզիջում իւրաքանչիւր կողմից: Դեռ չէք կարող մատնանշել որեւէ միջազգային բանակցային գործընթաց, որի արդիւնքում կողմերից մէկը հասել է իր պահանջների լիակատար իրագործմանը: Տուեալ դէպքում ես միանգամայն համոզուած եմ, որ սեղանի դրուած տարբերակը լաւ հարաւորութիւն է ինչպէս Ատրպէյճանի, այնպէս էլ Հայաստանի համար», - յայտարարել է Սթիւարտ Մաննը:



ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԴԵՌ ՉԻ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ  
ՀԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻ ՅՍՏԱԿ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: 2005 թվականի նոյեմբերի 25-ին Լոս Անճելըսում տեղի ունեցած հեռուստամարաթոնից յետոյ հրաւիրած մամուլի ասուլիսի ընթացքում, Հայաստանի Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն Նաիրա Մեղքումեանը նշեց, որ հեռուստամարաթոնի եւ մասնաւորապէս Հայաստանից կատարուած նուիրատուութիւնների աւելի յստակ տուեալները կը հրապարակեն Յունուարին: Սակայն այդ տուեալները դեռ չեն հրապարակուել:

Հայաստանի համահայկականը ամենից աւելի պէտք է շահագրգռուած լինի, որ հանրութիւնը տեղեկանայ իր վճարած գումարների մասին: Ազգային բարերարութիւնը իւրապատու կատեգորիա է, եւ 300 խոշոր հարկատուների նման պէտք է հրապարակել նաեւ գուցէ երեք, գուցէ չորս, գուցէ նաեւ նոյնպէս 300 խոշոր բարերարների ցուցակը: Դա հանրութեան համար էական նշանակութիւն ունի, քանի որ կարող է իւրօրինակ լակմուսի թուղթ լինել հայաստանցի մեծահարուստների հանդէպ հասարակութեան վերաբերմունքի փոփոխութեան առումով:

Զարմանալի է նաեւ այն, որ Հիմնադրամը չի շտապում մէկ օր առաջ հրապարակել հանգանակութեան յստակ անուանական տուեալներ: Համազգային քսակի հետ կապ ունեցող մեր աղբիւրները վկայում են, որ շատ յաճախ հեռուստամարաթոնի ընթացքում յայտարարուած գումարները ուղղակի չեն հաւաքագրուել: Այսինքն, անձը խոստա-

նում է տրամադրել x գումար, բայց յետոյ միայն ինքն է իմանում, թէ այդ գումարը երբ կը տրամադրուի: Գուցէ դա է պատճառը, որ Հիմնադրամը լուրջ է: Կոնկրետ թուեր հրապարակելը նոյնը չէ, ինչ հեռուստամարաթոնի ամբողջական արդիւնքի մասին խանդավառ յայտարարութիւնը, յատկապէս ամիսներ անց: Կոնկրետ հասցեական նուիրատուութիւնը արդեն համադրուել է ընդհանուր յայտարարուած գումարի հետ, եւ համազգային հանգանակութեան բոցավառ շունչը կարող է կտրուել համեմատութեան պարագայում:

Այդ առումով Հիմնադրամը նախանձելի վիճակում չէ: Նա յայտարարում է մի թիւ, որը իրականում միայն թիւ է հեռուստատեսիւների վրայ, իսկ դրա համար յետոյ այլեւս ոչ ոք պատասխանատուութիւն չի կրում: Որեւէ մեկին հասարակական պարսաւանքի ենթարկել, որ խոստացել ու չի տուել՝ կը նշանակի կասկածի տակ առնել Հիմնադրամի գաղափարը, յատկապէս որ այդ որեւէ մէկն էլ գուցէ պատասխանի, որ չի տուել նախկին տուածները արդիւնքը չտեսնելու պատճառով: Այդ դէպքում հասկանալի է, որ գործ կ'ունենանք համահայկական սկանդալի հետ: Այդ պատճառով էլ թերեւս ամենից նպատակայարմաբար հանգիստ ու լուռ աշխատելն է, ինչն էլ անում է Հիմնադրամը: Եթէ Մոսկովան միանգամից չի կառուցուել, Հայաստանն ու Ղարաբաղը ինչպէս կարելի է կառուցել միանգամից:

ԵԱՀԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎՈՒՄ  
ԿՐԿԻՆ ԲԱՐՁՐԱՑՈՒԵԼ Է ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԽԱՉՔԱՐԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

«Ատրպէյճանական պատուիրակութեան անդամներն իրենց ելուցներում փորձում էին համոզել, որ նման բան տեղի չի ունեցել, եւ որ Ատրպէյճանին դատապարտող՝ Եւրախորհրդարանի ընդունած բանաձեւը թիւրիմացութեան արդիւնք է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաղորդեց հայկական պատուիրակութեան անդամ, ընդդիմադիր «Ազգային միաբանութիւն» կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեանը: - «Յաւ եմ ապրում, որ Ատրպէյճանի պատուիրակը այս հեղինակաւոր դահլիճում խաբեբայութեան մէջ է մեղադրում



Եւրամիութեանը, քանի որ հենց Եւրախորհրդարանը փետրուարի 16-ին 85 կողմ ձայնով դատապարտեց ազերիների վանդալիզմը Զուղայի գերեզմանատանը»:

ԳԵՈՐԳԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն  
միայն թէ մարզիկները բարեխիղճ ըլլան ու դիմեն թոյլտուութեան համար, ու այնուհետեւ նաեւ յայտարարուի հեղինակի անունը:

«Արտօնութիւն ոչ ոք չունի, նրանք առանց հարցնելու են օգտագործում: Մեր գոյգը նախկինում պարում էր իմ երաժշտութեան տակ, իսկ որ ուրիշ ազգերի ներկայացու-

ցիչներ են պարում՝ բարեբախտաբար, յայտարարում է, որ հայկական երաժշտութիւնն է, ճիշդ է՝ հազուադէպ», - ըսած Արա Գէորգեան եւ աւելցրեց. - «Հայաստանի հեղինակային իրաւունքների կոմիտէն նամակներ կ'ուղարկի համապատասխան ատեաններին: Բաւական չէ, որ արտօնութիւն չեն հարցնում, դեռ չեն էլ յայտարարում հեղինակի անունը»:

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ԱՆԴԱՄ ԿԻՆՏԵՐՈ ԹԵԿՆԱԾՈՒ  
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ 43-ՐԴ ՇՐՋԱՆԻ

Կլէնտէյլի Քաղաքային Խորհուրդի անդամ Ֆրանկ Կինտերօ ձեռնարկած է Նահանգային 43-րդ Շրջանի թեկնածութեան աշխատանքին:



«Ես իմ ամբողջ կեանքը տրամադրած եմ հասարակութեան ծառայութեան եւ աշխատաւոր ժողովուրդին օգնութեան ի սպաս, տրամադրելով աշխատանքային փորձառութիւն ձեռք բերելու, տան սեփականատիրութեան ծրագիրը ընդլայնելու, ոստիկանութեան եւ հրշէջներու ծառայութիւնները բարելաւելու, ինչպէս նաեւ հանրային զբօսայգիները պահպանելու պայմաններ եւ առիթներ: Ես կ'ուզեմ երթալ Սաքրամենթօ գտնելու նոր առիթներ՝ բարելաւելու համար բոլոր Քալիֆորնիացիներու կեանքը», ըսաւ Կինտերօ:

2001 թվականին ի վեր՝ Կինտերօ կը ծառայէ Կլէնտէյլի Քաղաքային Խորհուրդին: Ան վիեթնամի վեթերան է, որ պատերազմէն ետք կը վերադառնայ տուն, կը վկայուի քոլեճէն, եւ կ'անցի գործի՝ որպէս աշխատանքային խորհրդատու, առաջին հերթին օգնելու պատերազմէն վերադարձող վեթերաններուն, զանոնք պատրաստելով աշխատանքի:

Այդ աշխատանքին սկսելէ ետք Կինտերօ կը գործակցի բանուորական միութեանց, գործատէրերու, աշխատանք փնտնողներու եւ Կլէնտէյլի Պրոպէյնք եւ Լոս Անճելոս հաստատուած գաղթականներու հետ, անգործները գործի տեղաւորելու եւ աշխատանքէ դուրս դուրսուածները վերապտրաստելու, մասնագիտական դպրոց ուղարկելու, կամ՝ սեփական աշխատատեղի բանալու համար:

Կինտերօ նաեւ իր ծառայութիւնը մատուցած է որպէս Կլէնտէյլի Առեւտրական Պայատի Նախագահ, Ռասմոյն-Մաունթըն շրջանի Բնակարաններու Սեփականատէրերու Միութեան Նախագահ, եւ որպէս անդամ՝ Աշխատու-

ժի Ներդրութի Նահանգային Յանձնաժողովին, ինչպէս նաեւ՝ Հանրային Զբօսայգիներու Յանձնախումբին: Կինտերօ նաեւ համա-Հիմնադիրն է Կլէնտէյլի Դեմոկրատ Խմբակին, եւ Կլէնտէյլի Երիտասարդական Միաւորման:

Տարիօ Ֆրամըրին յաջորդելու Կինտերօյի ընտրաշրջանին թիկունք կը կանգնին բազմաթիւ կազմակերպութիւններ եւ անձնաւորութիւններ, որոնց կարգին՝ Ուսուցիչներու Քալիֆորնիոյ Միութիւնը, Կլէնտէյլի Ոստիկաններու Միութիւնը, Լոս Անճելոսի Գաւառ Ոստիկաններու (Շէրիֆ) Միութիւնը, Քոնկրեսի անդամ Հատուրտ Պըրմըն, Լոս Անճելոսի Քաղաքային Խորհուրդի անդամ Թոնի Քարտենաս, Պըրպէյնքի Քաղաքային Խորհուրդի անդամ Մարշա Րամոս, Կլէնտէյլի Քոլեճի Հոգաբարձութեան անդամ Վիքթոր Քինկ, Գործարար եւ Հայ Դատի Յանձնախումբի Արեւմտեան Շրջանի Վարչութեան նախկին անդամ Րաֆֆի Գրաճեան եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի Ատենապետ Վազգէն Խոտանեան:

Նահանգային 43-րդ Շրջանը կ'ընդգրկէ Կլէնտէյլն ու Պըրպէյնքը, եւ Լոս Ֆելիք, Սիլվըր Լէյք, Աթուաթըր, եւ Նորթ Հայլիվուս շրջանները:

«ԿԱՐԾ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՏՈՅ ՄԵՆՔ ԼՈՒՐԶ  
ԶԱՆԳՈՒԱԾՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՓՈՂՈՑՈՒՄ»

Շարունակուած էջ 1-էն  
Խուլիւն իրականացնել, Սարգսեան պատասխանեց. - «Միանշանակ հնարաւոր է: Դրա համար տքնաջան աշխատել է պէտք՝ սկսած պարտիզանական պայքարից մինչեւ փողոցներ դուրս գալու պայքար: Դրա համար ընդդիմութեան որոշակի թեւերի համախմբում է պէտք, աջակիցներ ունենալ է պէտք»:

Խնդիրները լուծուող են»:  
Նոր ստեղծուող կուսակցութիւնների (Գաղիկ Ծառուկեանի «Բարգաւաճ Հայաստան»-ը, Արտաշէս Թումանեանի «Նոր Երկիր»-ը) հետ համագործակցութեան կարելիութեան մասին խօսելով «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահը ըսաւ. - «Նոր ստեղծուող կուսակցութիւնների հետ համագործակցութիւնը տեսականօրէն բացառում էմ. թող ստեղծեն՝ տեսնենք ովքեր են», - ըսաւ ան աւելցնելով. - «Որովհետեւ Գաղիկ Ծառուկեանի քաղաքական կենսագրութիւնը ես չգիտեմ... Ակնյայտ է, որ այս երկրում մարդիկ կարող են ունեցուածք դիզել մէկ պայմանում՝ եթէ իրենք սպասարկում են իշխանութիւններին: Հետեւաբար՝ իրենց կուսակցութիւններն էլ սպասարկելու են իշխանութիւններին: Հետեւաբար՝ դրանք ստեղծուած են իշխանութիւնների պատուէրով»:

# ԱՐՏԱԽԱՉԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՃՈՐՃ ՖԵՏՈՅԻ ՄԱՏԻ ՓԱԹԹՈՅԸ

Շարունակում է էջ 1-էն

րային կենցաղի հարազատ ներկայացումն է բեմի վրայ: Այդ հարազատությունը, անշուշտ, կենթադրել տալ տուեալ ժամանակաշրջանի փառքերը, որոնք մարմին կը ստացան յաջող, ճշգրիտ պատկերացումով մը վերաբարձրել այդ ժամանակաշրջանի յատուկ տարազներու, շարժումներու, դիտողականությունն եւ արտայայտչական կշռոյթները: Հոս է, որ դերասանը իր խաղը պիտի խաղայ, նախքան բեմ բարձրանալը: Այդ խաղը կ'ենթադրէ ֆիզիքայէս, նկարագրով եւ հոգեպէս նոյնանալ այն տիպարին հետ, զոր պիտի մարմնաւորէ ամբողջ ներկայացումներու շրջանին: Եւ որպէսզի կարելի ըլլայ թատերախաղի տիպարին ու գանկի մարմնաւորող դերասանին միաձուլումը, պայման է մօտէն ծանօթ ըլլալ տրուած ժամանակաշրջանի պատմական ելեւէջներուն ու կենցաղային իւրաքանչիւր թիւններուն:

Այնուհետեւ կը սկսի ծանր աշխատանքը, որուն համար ժամանակ է պէտք արդիւնաւորութեամբ համար: Բարեբախտաբար, այդ «La Belle Epoque»-ի կենցաղը, մեծաւ մասամբ իրենց արտաքին երեւոյթով պատկեր, իսկ ներքին կառուցով վիրաւոր՝ առաւել շեշտուածութեամբ ու թափանցիկութեամբ կը պահեն իրենց գոյութիւնը ներկայ, մեր այժմէական ժամանակներուն: «La Belle Epoque»-ի եւ մեր արդի ժամանակաշրջաններու բաղադրատարրերը կատարելու մտքով գրուած չէ թղթակցութեան մը սահմաններէն անդին անցնող այս գրութիւնը: Այլ, կ'ուզենք դիտել տալ, որ բեմ բարձրացող Արտաւազդի բեմադրիչին ու իր շնորհալի դերասաններուն համար բոլորովին անծանօթ կենցաղ մը չէր ձորձ ֆետոյի նկարագրած մարդկային ընկերութեան բարոյական եւ մարդկային վարքագիծերը:

Արդարեւ, մեզ մտահոգող երկու կէտեր, ի սկզբբանէ, կը գտնենք իրենց լուծումը: Նախ այն՝ որ ձորձ ֆետոյի ստեղծած միջավայրը ամբողջովին անծանօթ աշխարհ մը պիտի չըլլար արտաւազդիներուն համար. պարագայ՝ որ պիտի դիւրացնէր ֆետոյի տիպարներու հետ Արտաւազդի դերակատարներու ընդունակութեամբ: Երկրորդը՝ Մատի Փաթթոյ «փիլիսոփայ» ընտրութիւնը կատարուած չէր պատահականօրէն ու պարզապէս կուշտ ու կուռ ծիծաղ կորզելու ու այդ գծով հանդիսատեսներուն պայթումակ պուաւոններն

ու ծափողջոյնները շահելու համար: Ընդհակառակը՝ բեմադրիչին նշանակելի նպատակն էր, պոռթկուն ծիծաղի ճամբով ուժգին ձողկել մեր ընկերութեան ներս բոցն հաստատած ու տակաւ գարգացող դուրսէն ժառանգուած այն յոռի բարքերը, որոնք, կ'ենթադրեմ, ֆետոյի նկարագրած կենցաղի հետ բաղադրատարրութեամբ կ'ապականեն մեր կեանքի մթնոլորտը, այդ ձեւով վտանգելով նաեւ մեր ազգային, ընկերային եւ մշակութային կառուցները, անոնց հանդէպ մեր նոր սերունդներու ցուցաբերած անտարբերութեան պատճառաւ: Առիթով մը, մեր երկուքին միջեւ տեղի ունեցած երկխօսութեան մը ընթացքին, Մաթթոյն կը պարզէր այն միտքը, թէ Արտաւազդի ամբողջ ըրածը, հայ նոր սերունդը դէպի հայ մշակոյթին մօտեցնել է:

Այս տեսանկիւնէն մեկնելով, ձորձ ֆետոյի «Մատի Փաթթոյ»-ով, Արտաւազդը հաճելին՝ օգտակարին ընդելուզած, պիտի գար իր կատակերգութիւններու շղթային անցնելու յաջող նոր օղակ մը, որ իր շօշափելի արտայայտութիւնը պիտի գտնէր շնորհիւ հայ բեմին նուիրեալ հոյլ մը շնորհագարդ սիրողական դերակատար-դերակատարուհիներու, որոնք, ի գին ամէն դժուարութիւններու վառ կը պահեն հայ թատրոնը մեր գաղութէն ներս:

Երբ կայ սէրն ու նուիրուածութիւնը՝ հոն է եւ շնորհքը:

Բեմ բարձրացող իւրաքանչիւր դերակատար-դերակատարուհի ցոյց կուտար ձգտում մը իր լաւագոյնը տալու, անով ալ իմաստաւորելու համար մէն մի շարժում, խօսք ու հոգեվիճակ: Անգամ՝ աննշան, արագ ու աչխիռակի նման սպասուհի դերով բեմին վրայ երեւնալով ու իր պատգամը իր տիրոջ հաղորդելէ ետք արագ մը աներեւութացող ժապիւն Նարեան ուժեղ տպաւորութիւն թողուց սրահէն ներս: Նոյնն է պարագան ժանի դերով Հրաչ Աճեմեանի, Անթոնիոյի դերով Մարգիտ Խաչմանեանի պատկերային դերակատարութիւնները, որոնք արժանացան ներկաներու ուշադրութեան: Իսկ իշխանական, այլ իր անձին հանդէպ յարգանք պարտաւորող ծառայ ֆիրմէնի դերով՝ Յարութիւն Թումայեան կը մնար միշտ մերթ ժպտուն, մերթ սիրալիւր, այլ հեղինակութիւն ունեցող բարձր խաւի ծառայի մը կերպարին մէջ: Մարսելիի ոչ այդքան նկատառելի կերպարին՝ Նանոր Մարգարեան իւրաքանչիւր հաղորդականութիւն մը

ստեղծեց՝ իր ու հանդիսատեսին միջեւ շատ բնական խաղարկութեամբ: Ուրքան ծիծաղախառն ցաւ սկսանք զգալ, որ Նանոր, իր իսկ բառերով ըստած, ամուսնական փորձառութիւնն չունէր, որ իր կարծիքը տար: Վարժ ներկայութիւն մը կը բացայայտէր շատ մը առիթներով մեր բեմերու վրայ տեսնուող Հայկ Ուրիշեան: Ամուսնալուծուած կնոջ եւ անոր սիրականին հետ ունեցած բարդ կապակցութիւններու մէջ նկատառելի էր իր արհեստավարժ, սրտի մօտ խաղարկութիւնը: Ծիծաղ պատճառող դժուարին տիպարներէն մին մարմնաւորող Պուզէնի դերին մէջ Յարութիւն Ֆաքճեան յաջող ներկայութիւն մըն էր բեմասարթակին վրայ: Կարելի է միանշանակ ըսել, որ արդիական այլ տարօրինակ մտապատկերացումներով առաջնորդուող նորահաս սերունդը ներկայացնող Վիվիանի տիպարը մարմնաւորող Նարինէ Աւագեան, կը մտածեմ, արդարացուց իրմէ ակնկալուածը:

Պարոնուհի Տիւվերժէի դերին մէջ իր մէջ զարգացած նկարագրային ու պահպանողական վարքագծով ծանօթ Մարո Աճեմեան, կը պահէ իր բեմական իւրաքանչիւրութիւնները: Եւ Մարոն, ամէն դէպքին, նոյն Մարոն է երբ բեմին վրայ է, ինչ որ կը յատկանշէ իր կատարողական յաջողութիւնը:

Փոնթանէի լրիւ տիպարը գտած տեսանք մեր գաղութի բեմի նուիրեալներէն Արմէն Գերասիմեան դերակատարին մէջ: Ան առանց ճշուամի, իր մէջ կ'ամփոփէր դիտողական եղանակաւորումներու «mimiques», մարմնական շարժումներու եւ արտայայտչական ունակութիւնները, շնորհիւ որոնց, իր խաղարկութիւնը կ'ընթանար դաշն, համոզիչ այլապէս զերծ աւելորդ ու անտաշ շարժումներէ:

Ծանր էր, նոյնպէս, Ռուբէն Հարմանտայեանի դերը Պուա Տանկէնի տիպարով: Գործող երկու երկար արարներու տեւողութեան, Հարմանտայեան չղաւեց երբեք Պուա Տանկէնին, որ կը համարուի բոլոր ժամանակներու անհաւատարիմ ամոլներու ախոյեան: Անտարակոյս բարդ է մէջընդմէջ երկու վարուե-

լակերպ մարմնաւորել տրուած միեւնոյն ակնթարթին: Պուա Տանկէնի ալեկոծ ներաշխարհը - մէկ երեսը դրական, միւսը ժխտական, յաջողապէս արտայայտութիւն գտաւ Ռուբէն Հարմանտայեանի խաղարկութեամբ:

Սօսի Վարժապետեան ինքզինք գերազանցող ներկայութիւն մը դարձաւ բեմասարթակի վրայ: «La Belle Epoque»-ը արտայայտող կարգ մը առանձնապատկութիւններէն են, նաեւ, կանացի երկար ու պապղուն հագուստ կապուստը, շինիոն մագալարդարումը, եղանակաւորուած այլ ուղմանթիք խօսեխոսքը, եւ այլն, որոնք պաճուճեր էին գինք, Լիւսէթի տիպարին մէջ: Սոսին սահուն, յստակ, անմիջական ու հարազատ էր իր դերին մէջ:

Գրիգոր Սաթամեան, Լիւսէթի սիրահարուած ժեներալ Իրիկուայի կերպարի մէջ՝ վաստակաւոր դերասանի, շնորհալի թարգմանիչի, տաղանդաշատ բեմադրիչի արժանիքներուն վրայ դարձաւ եւ ժեներալ, եւ համարեա հանդիսանար նաեւ... տկլոր բանաստեղծ Պոզնի ահաբեկիչը: Բարեբախտաբար շուտ երեւան ելաւ ճշմարտութիւնը, որ ան Լիւսէթի սիրահարը չէր...: Ի՞նչ կրնար պատահիլ, եթէ պաղաւտութեամբ ձայնը տոկոսային նահանջ մը արձանագրած չըլլար... (Սաթամեանի ձայնը որոշ համեմատութեամբ քաշուած էր կալայի օրը, մեր չար բախտէն)

ձորձ ֆետոյի «Մատի Փաթթոյ»-ի բեմադրութեան մէջ ինչպէս իրենց կարծ այլ ասուպային ներկայութեամբ, նոյնպէս եւ կեղծոնական դերերով բեմասարթակ բարձրացող դերակատարները, բոլորը մէկ, ցոյց տուին կատարողական ուրոյն մակարդակ:

Վալէլքի երեկոյ մը, որուն յաջողութեան համար, բեմադրիչին կողքին, Չերմօրէն կը շնորհաւորենք ձորձ ֆետոյի «Մատի Փաթթոյ» բեմադրութեան իրենց մասնակցութիւնը բերող բոլոր թերակատարները, քուլիսի ետին աշխատող թէքնիք անձնակազմին եւ Արտաւազդ թատերախումբի վարչական կազմը:

Վարձքերնիդ կատար:

**ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506**

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape® Keeping Californians Covered...

**The Power of Blue SM**

Health coverage for every household member and every household budget.

**Affordable plans for the whole family.**

The following plans are offered by Blue Cross of California (BCC): PPO Share 2500/1500/1000/500, EPO and HMO plans. The following plans are offered by BC Life & Health Insurance Company (BCL&H): Basic PPO 1000 (7959), Basic PPO 2500 (R418), PPO Saver (N121), PPO Share 5000 (4862) and RightPlan PPO-40 (P9037/PE48/PE49) plans. BCC and BCL&H are independent licensees of the Blue Cross Association (BCA). The Blue Cross name and symbol are registered service marks of the BCA.

**ԱՆՐԱՄԵՇՏ Է**

1975-2005

**30th ANNIVERSARY**

**BEDROS SIAMANTO MARONIAN**

AUTHORIZED INDEPENDENT AGENT CA Insurance Lic#0494056

**818-500-9585** 805 East Broadway, Glendale, CA 91205

BlueCross of California



# ԹՈՒՐԲԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԴՈՒՏ.ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Դոկտ. Փրոֆ. Փափազեանը ակնաւոր թրքագէտ է, որը վերջին չորս տասնամեակների ընթացքում հարստացրել է հայ թրքագիտութիւնը իր ուշագրաւ 11 գրքերով, մանաւանդ աղբիւրագիտութեան ասպարէզում: Վերջին քսան տարիների ընթացքում նա իր գիտական վաստակն ու հմտութիւնը ի սպաս է դրել Հայերի Յեղասպանութեան բարդ խնդիրների լուսաբանման գործի: Առանձնակի տեղ է գրաւում «Հայերի Յեղասպանութիւնը Ըստ Երիտթուրքերի Դատաւարութեան Փաստաթղթերի» գիրքը: Այդ հրատարակութեան պատրաստումը (թարգմանութիւն, ներածութիւն, ծանօթութիւններ եւ այլ) բացառիկ նշանակութիւն ունի, քանի որ անվիճելիօրէն ապացուցում է, որ Օսմանեան կայսերական Դատարանը առաջինն է ընդունել թուրքերի կողմից հայերի յեղասպանութեան փաստը: Աւելին: Մինչեւ օրս, վերջին 85 տարիների ընթացքում, ոչ մի թուրքական կամ այլ երկրի դատական հաստատութիւն չի հերքել այդ ատեանի, նրա որոշումների ու վճիռների օրինականութիւնը:

1908-ի Երիտթուրքական յեղափոխութիւնը երբեմն անուանում է նաեւ թուրքական Սահմանադրութեան վերականգման համար մղուող պայքարի յաղթանակ: Այն իր գաղափարական սկզբունքները թաղեց Ատանայի եւ Կիլիկիայի ջարդերում, իսկ Սահմանադրութիւնը թղթակոչութիւն վերածեց 1913-ի պետական հարուածով եւ եռատիրական բռնատիրութեան հաստատումով: 1918-ին, Ա. Աշխարհամարտում Օսմանեան կայսրութեան պարտութեամբ բռնատիրութիւնը տապալուեց ու սկսեց գործել Սահմանադրութիւնը: 4 Նոյեմբեր, 1918- 12 Դեկտեմբեր 1918-ի Երեսփոխանական Ժողովի (Meclisi Mebusan) նիստերի ընթացքում թուրք, քուրդ եւ հայ երեսփոխանները իրենց ելույթներում Երիտթուրքական իշխանութիւնները մեղադրեցին երկիրը քայքայելու, պարտութեան մատնելու, Սահմանադրութեան հիմնական յօդուածները (կեանքի, սեփականութեան ապահովութեան) եւ կոպիտ պրոցէսուալ կանոններ խախտելու մէջ: Այդ հիման վրայ 1919-ի Յունուարի 8-ին Պոլսում կազմուեց են ուղղակի ատեաններ: Մարտի 8-ին Սուլթան Մեհմետ Զ. Վահիտէտտինի հրամանով Երիտթուրքական պարագլուխները եւ նախարարները յանձնուեցին են ուղղակի արտակարգ ատեանների քննութեան: Շուրջ երկու տարի տեւած դատաքննութիւնը նրանց (Թալաթ Փաշային, Էնվեր Փաշային, ձեմալ Փաշային, Պեհլուտին Շաքիր պէյին, Դոկտ. Նազիմ պէյին, ձաւիտ պէյին, Սուլէյման Էլպիստանի պէյին, Մուստաֆա Շերիֆ պէյին, Օսկան Էֆենտին, Դոկտ. Ռուզուհի Էֆենտին, Ազիզ Էֆենտին, հեռակա կարգով- Սայիտ Հալիմ փաշային, Միտհատ Շուքրի պէյին՝ Ահմետ ձեւատ պէյին, Աթիք պէյին, Զիա Գէօքալփին, Քիւլչիլի Թալաթ պէյին, Ռիզա պէյին, Իպրահիմ պէյին, Հայրի Էֆենտին, Մուսա Քեազիմ Էֆենտին, Նալիլ Էֆենտին, Ահմետ Նեսիմ պէյին, Իսմայիլ ձանփոլատ պէյին, Ապպա Հալիմ փա-

ձային, Ալի Միւնիֆ պէյին, Շիւքրի պէյին, Քեմալ պէյին, Հիւսէյն Հաշիմ պէյին, Ռիֆաթ պէյին, Մեհմետ Էսատ Էֆենտին-ի ներկայութեան) դատապարտեց տարբեր պատիժների՝ մահապատժից մինչեւ վարչական ու նիւթական տուգանքների:

Ինչո՞ւ Օսմանեան կայսրութեան վերջին Սուլթանը երկրի իրաւապաշտպան ու իրաւագէտ սերունդը հաւաքել էր դատելու համար երիտթուրքական իշխանութեան վերնախաւին: Որոշ հեղինակներ գտնում են, որ այն արուեստ Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութիւնը ամբաստանելու պետական դաւաճանութեան, կայսրութիւնը տապալելու մէջ: Դատաւարութեան ընթացքում նկատելի էր նման մի միտում: Զինուորականութիւնն էլ իր հերթին փորձում էր մեղքը բարդել պետական այրերի վրայ: Բայց մեղադրական փաստաթղթերում եւ վճիռներում պարզ նկատելի էր, որ մեղադրանքի շրջանակը շատ աւելի լայն է: Այսպէս օրինակ, մեղադրական եզրակացութեան մէջ գրուած

է. «Ներկայ հետաքննութեան զխաւոր հարցն այն է, որ հայերի տեղահանութեան ընթացքում, տարբեր ժամանակներում եւ զանազան վայրերում տեղի ունեցած յանցագործութիւնները եւ յատկապէս իւրաքանչիւր յանցագործութեան նկատմամբ օրէնքի հիման վրայ կատարուած քնն-նութիւնները ցոյց են տալիս, որ դրանք ոչ թէ սահմանափակ կամ տեղական բնոյթ են ունեցել, այլ կանխամտածուած իրականացուել են վերոյիշեալ անձերից բաղկացած եւ միասնական ուժ հանդիսացող «յատուկ կենտրոնի» բանաւոր հրահանգներով եւ գաղտնի հրամաններով»:

Խարբերողի գինուորական ատեանի դատավճռում կարգուեց ենք. «Սոյն դատաւարութեան ընթացքում լսուեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին բոլոր դատական փաստաթղթերը: Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ՝ մեղադրեալ Դոկտ. Պեհլուտին Շաքիր պէյը, որպէս «Յատուկ կազմակերպութեան» նախագահ, Ստամպուլից դուրս գալով, սկսել է շրջակայքէլ Տրապիզոնի, Էրզրումի, եւ այլ վիլայէթներում: Միեւնոյն ժամանակ, բանտերից դուրս

բերուած ոճրագործներից եւ այլ յանցագործներից կազմուած հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում կոտորել է տեղահանուած հայերին եւ նրանց ունեցուածքը ենթարկել կողոպուտի: Նա իր նենգ ծրագրերը իրագործելու համար, այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դէպքերը, ուղարկում էր նաեւ անտեղեակ եւ դիւրահաւատ այնպիսի մարդկանց, որոնք միտում էին վերոյիշեալ թեշխիւթը մահուտէին»՝ ակամայ ատելութեամբ եւ շահույթ ստանալու մոլի ցանկութեամբ համակուած: Իր պարտականութիւնները կատարելու ընթացքում, յաճախ բանաւոր կարգադրութիւններ եւ երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել եւ «թեշխիւթը մահուտէին» հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարութեան ներքո՝ հայերին կոտորելու եւ բնաջնջելու նպատակով»:

Այսպիսով, Սուլթանի հրամանով ստեղծուած դատական ատեանների գլխաւոր նպատակներից է եղել պարզել նաեւ հայերի բռնագաղթի, կոտորածի, բնաջնջելու

Շարք էջ 19

## ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նուիրուած՝

### ԹՈՒՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆԻ

ԳՐԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

50

ԱՄԵԱԿԻՆ

Հովանաւորութեամբ՝

### ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

ԲԱՐԵՍԻՐԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

Յորելիմական Բանդիսութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն՝

- ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ
- ԹԷԲԷԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
- ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
- ՄԱՇՏՈՑ ԳՈԼԷՃԸ
- ԻՐԱՆԱՀԱՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ
- ՊՈԼՍԱՀԱՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ
- ԱՄԵՐԻԿԱՀԱՏ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ

**Կիրակի, ԱՊՐԻԼ 2, 2006, ԿԷՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՍԸ 5:00-ԻՆ**

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԱԲԼԻԾԻՆ ՄԷՋ**

**3325 North Glenoaks Boulevard, Burbank**

Հանդիսութեանէն ետք տեղի պիտի ունենայ ձՈՆ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

**ՄՈՒՏԲԸ՝ ԱԶԱՏ — ՍԻՐՈՎ ՀՐԱԻՐՈՒԱԾ Է ԳՐԱՍԷՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ**



# ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԸԱԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Իմաստով իրարու մօտ երկու բառեր են եւ տարակարծութիւնն ու հակամարտութիւնը: Թէեւ ոչ այնքան մօտ՝ բայց ոմանց միտքին մէջ կը նոյնանան անոնք: Նոյն հարցին մասին տարակարծիք ենք, այսինքն, տարբեր կարծիք ունինք, ուրեմն, մեր կարծիքները իրարու հակառակ ըլլալով հակառակորդ ենք՝ հակամարտութիւն կա՞ մեր միջեւ: Այսպէս կը զարգանայ տրամաբանութիւնը անոնց մօտ, եւ այդ տրամաբանութեամբ ալ կ'առաջնորդուին կեանքի մէջ:

Տարակարծութիւնն ու հակամարտութիւնը շփոթող եւ իրարու հետ բախում ունեցողները եթէ իրենք իրենց ապրող սովորական մարդիկ են, բախումը սահմանափակ վնաս միայն կը պատճառէ՝ յանգելով վիճաբանութեան, ծեծուրտութիւն կամ նոյնիսկ սպանութեան, սակայն սահմանափակ շրջանակի մէջ, առանց մամատարած հանգամանքի: Իսկ եթէ այդ մարդիկը պատասխանատուներ են հաւաքականութիւններու - կուսակցութիւն, համայնքային կազմակերպութիւններու պետութիւն - այդ պարագային հարցը կը բարդանայ եւ կրնայ ծանր հետեւանքներու տեղի տալ: Այդ հետեւանքները կրնան ըլլալ ազգամիջեան բախումներ, որոնք կը ջլատեն ներքին միասնականութիւնը՝ խափանելով համագործակցութեան ազգօգուտ արդիւնքները: Անոնք կրնան ըլլալ նաեւ միջազգային՝ տեղի տալով լարուածութեան ու պաղ պատերազ-

մի, հասնելով սահմանափակ բախումներէն մինչեւ ընդհանուր պատերազմ: Որովհետեւ տարակարծութիւնը չ'ըմբռնուի իր սկզբունքայնօրէն, մարգական ոգիով, հանդուրժողութեամբ, դիմացինին կարծիքի ազատութիւնը չարգելով:

Ճիշդ հասկցուած տարակարծութիւնը նոյնիսկ օգտակար երեւոյթ է՝ մտածումի ու գործունէութեան մէջ մրցակցութիւն յառաջ բերելով, պայմանաւ որ մրցակցութիւնը հակամարտութեան չվերածուի: Տարակարծութիւնը մաքուր եւ շիտակ հունի մէջ պահելու համար անհրաժեշտ է շահախնդրութեան հետ պահել զայն: Արդարեւ, տարակարծիք կողմերու միջեւ երբ շահախնդրութիւն մըն է, տարակարծութիւնը կը շեղի իր հունէն, վերածուելու համար հակամարտութեան՝ անոր բոլոր ծանր հետեւանքներով: Պէտք է անտեսել նաեւ հեռանականութիւնը՝ որ պատճառի փոփոխութեամբ տարակարծիք կողմերու դիրքերը ևս փոխուին ու տարակարծիքները ըլլան համակարծիք:

Կարելի է բազմաթիւ օրինակներ տալ:

Երկու բարեկամներ ծիրանի հսկայ ծառի մը տակ կը վիճին, թէ ո՞րն է այդ ծառին կարեւոր դերը՝ տուած պտուղը թէ շուքը: Տարակարծիք են:

Ոմանց համար յովազը գիշատիչ գազան մըն է, իսկ ինծի համար՝ գազաններու գեղեցկագոյն մարմնացումը:

Հաւը՝ հակիթէն ելաւ, թէ

հակիթը հաւէն՝ յախտենական տարակարծութեան նիւթ է:

Շատ տարակարծիք ժողովուրդներ կան, որոնք խաղաղօրէն կ'ապրին, ամէն մէկը իր ճաշակով ու ըմբռնումով, եւ այդ է համակցութեան գեղեցկութիւնը՝ միօրինակութեամբ դէմ ալլազանութեամբ, բազմատեսակ ոճով ու գոյներով:

ԱՍԱԼԱ-ի սղաքը ոմանց տեսակցտով ազատամարտիկներ՝ ազգային վրիժառութեան համար գոհուած հերոսներ էին, իսկ ոմանց տեսակցտով՝ ահաբեկիչներ: Տարակարծութիւն է:

Նոյնն է պարագան պաղեստինցի մարտնչողներուն, որոնք չկարենալով իրենց հայրենիքը գրաւած Իսրայէլի դէմ բանակով ձակապահել, հրոսակային-ֆետայական պայքար կը մղեն, որուն եւս կը տրուի երկու որակում - թերորիզմ, կամ ազատագրական պայքար - ըստ հայեցակէտի:

Նոյնպէս երկու կարծիք՝ տարակարծութիւն կայ նաեւ նախագահ Պուշի մասին, որ ըստ իրեն եւ միլիոնաւոր մարդոց՝ մարդկային իրաւունքներու, ազատութեան եւ դեմոկրատիի պաշտպանն է, իսկ այլապէս մտածող միլիոնաւոր մարդոց տեսակցտով անիկա մարդկային ազատութիւնները ճգմող, դեմոկրատի անուան տակ բռնատիրութիւն հաստատող, աշխարհակալութեան ձգտող, աւելի երկար ձեռքերով նոր Հիթլեր մըն է:

Նախագահ Պուշ տարակարծիք էր նախագահ Սատտամ Հիւսէյնի ժողովուրդ ու երկիր կառավարելու ձեւին մասին: Վստահաբար Սատտամ Հիւսէյնն ալ Պուշին հետ տարակարծիք էր Ամերիկան եւ աշխարհը կառավարելու գեղեցիկ անոր ոճին մասին, բայց այդքան միայն: Պատերազմի չդիմեց, չէր ալ կրնար անշուշտ: Բայց նախագահ Պուշ տարակարծութիւնը հակամարտութեան վերածելով ժամանակ մը իրաքեան վարչակարգին դէմ քարոզութեամբ համամարդկային կարծիքը «մշակելէ» յետոյ, յարձակե-

The new members are Dennis Papazian, PhD, of Woodcliff Lake, a professor of history at the University of Michigan-Dearborn and director of the university's Armenian Research Center; Cecile Seiden of Livingston, a retired educator who was a hidden child in Belgium during the Holocaust; and Mabel Williams of Ewing Township, manager of equal-employment opportunities and affirmative action for the NJ Department of Education. All are appointees of former Gov. Richard Codey.

"I'm very pleased that the governor's office has appointed individuals to the commission who represent diversity for the membership," Paul Winkler, executive director of the 21-member commission, said in an interview before the commission's meeting in the State House Annex in Trenton.

"The Holocaust Commission has long felt that its role is to deal with all issues of bias, prejudice, and acts of discrimination. That's been the key," Winkler said. "This is not the Jewish commission or the Israel commission. This is a commission that deals with all issues of bias, and we're pleased this will continue with the new membership."

Commission chair Philip Kirschner also welcomed the diversity of the new members. "I think it's terrific," the Trenton attorney said. "The new appointees bring a needed perspective — something I think will enrich the commission's work in the future to reach many more people in the state."

Papazian, who has long been active in political and educational circles in Michigan, said he sought out a seat on the commission when he moved to New Jersey a year and a half ago with his wife, Mary, who had just taken a position as dean of the College of Humanities and Social Sciences at Montclair State University. He continues to work for the University of Michigan on a



Dennis Papazian, PhD

telecommuting basis and also contributes to the work of several international groups focused on the issue of genocide, including the International Association of Genocide Scholars and the Workshop for Armenian-Turkish Scholarship.

"I've always had an interest," Papazian said. "I said to myself: How can I get attached in a new state?"

"I feel honored," he added. "My goal is to work with the group to continue its programs and, if possible, to enrich it — to add another dimension. The group has done some wonderful things in terms of education, and I hope to contribute to that."

For Williams, who was appointed to the commission on the recommendation of Democratic Assemblywoman Bonnie Watson Coleman of Trenton, working with Winkler will be nothing new. The two have collaborated for several years at the Department of Education and, in 1996, they joined forces to form the Global Village Team, a group of volunteers who develop programs on Holocaust remembrance and the commemoration of such observances as Black History Month and Women's History Month.

For Seiden, who was principal of the Summit Jewish Community Center for 11 years before her retirement in 1998, sitting on the commission is just one more step in a long association with the body. She is one of the writers of the commission's curriculum guides, "Caring Makes a Difference," for grades kindergarten through four, and "To Honor All Children," for grades five through eight.

(abbreviated)

## Raffi Hovannisian Under Attack

Continued from page 1

separate letter to Harutiunian and the chief of Kocharian's staff, Armen Gevorgian.

Harutiunian scoffed at the demands on Tuesday, saying that the state TV will continue its "investigation" into JAA's activities. He said it has so far aired only "30 percent" of its purported compromising material. "Raffi Hovannisian had better draw conclusions from that report," Harutiunian told RFE/RL.

The report in question was attributed by an H1 news presenter to Haylur's hitherto unknown "investigative team." A pro-Kocharian TV commentator who did its voiceover was quoted on Monday by the Hetq.am online news service as admitting that he was not involved in the

"investigation" and simply read out a script handed to him by H1 editors. "A source at Public TV told us that the text of the report had been sent to Haylur from the information service of a state agency," said Hetq.am.

Armine Hovannisian, meanwhile, links the televised allegations to the toughening of her U.S.-born husband's anti-government rhetoric which came to light during opposition rallies staged in Yerevan in the wake of last November's disputed constitutional referendum. Addressing one of those rallies, Raffi Hovannisian challenged Kocharian to answer two dozen incriminating questions that effectively implicated him in high-profile murders committed in Armenia and Karabakh over the past 13 years.

Barlow Der-Mugrdichian and Very Rev. Fr. Dajad Dz. V. Yardemian, for their meticulous efforts in ensuring the success of the symposium.

Lastly, the Primate extended words of appreciation to the speakers of the day, for their time and for sharing with the community their expert knowledge.



# ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱՃԱՌՈՒՄ ՄԵԾԱՍՈՒԹԻՒՆԸ՝ ԸՆԴՈՒ ԶԷ ՄՏԱԳԱՐՈՒԹԵՆԷ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼ ԿԵՐԵԱՆ

Ո՞ր ողջամիտ մտաւորականը կրնար երեւակայել, որ օր մը համբաւի հասած հեղինակութիւններ, իրենց գրագէտի վարկը մրոտելով, ապրուստի միջոց պիտի ընէին գրախօսականներու վաճառումը, մամուլի էջերուն մէջ ներբողելով գրատպէսներու անոյց արժանիքները... դրամի սիրոյն:

Դարուս կարծրացած նիւթապաշտութիւնը չաջողեցաւ գրակապութեան մէջ ներմուծել շահասիրութիւնը եւ առեւտրական բնոյթ տալ հրատարակագրութեան:

Գրախօսականներ կը գրուին ներբողական սիւնակներով միջակութիւնները արժէքի վրայ բռնելու եւ անոնց շնորհագորակ հրատարակութիւններուն՝ ճառագայթում տալու գրականութեան մէջ:

Գրախօսողը եւ գրախօսուողը, այս այսպանելի առեւտուրին մէջ, հաւասարապէս կը շեշտեն նկարագրի համանոյցութիւնը, որ ամօթալի է եւ ստգտանելի:

Գրախօսողը, որ գրագէտ մըն է գրական վաստակով, որքան ալ հանրաճանաչ հեղինակութիւն մը ըլլայ, չի կրնար փրկել իր բարոյականը հանրութեան դատապարտութենէն, երբ սնափառի մը անձը եւ շնորհագորակ հրատարակութիւնը հասարակութեան հիասքանչ ուշադրութեան կը յանձնէ... դրամի սիրոյն:

Դժբախտաբար, ներկայ հայ իրականութեան մէջ, մեծ է թիւը գովեստի քաղցէն տառապողներու: Տպաւորել եւ գովուի կ'ուզեն, առանցքը դառնալ բազմութիւններու մէջ բոլորին սեւեռաբեր ուշադրութեան:

Շատեր ինքնախաբէութեան՝ լայն տեղ տուած են իրենց մտածողութեան մէջ եւ ամօթ չեն զգար սուտին ընծայած դիւրութիւններով՝ վերելք տալու իրենց եսական երեւումներուն:

Բժշկական առումով մտային հիւանդներ են իրենց անձով տոնքացող այս հոգեկան հիւանդները, որոնք մեծամոլութեան մէջ արբշուած՝ շատ հեռու չեն ցաւագարութեան սահմաններէն: Կ'ուզեն երեւալ, երեւելի դառնալ, փառաւորուելի շքանշաններով եւ շնորհահանդէսներով, շրջապահի տիտղոսներ կցել իրենց անուններուն, գիտակցութիւնը չունին իրենց տկարութիւններուն, իրենց իտէչըն է հերոսանալ՝ յաչս հասարակութեան... ինքնախաբէութեամբ:

Դարուս շեշտուած՝ բարոյական հիւանդութիւններէն մէկն է ցուցամոլութիւնը: Ամէն դասակարգի ու ասպարէզի մարդիկ պատուակալ դիրքերու վրայ, փառաւորուելի կ'ուզեն շքանշաններով, շնորհահանդէսներով, դրուատալից գրախօսականներով եւ յոբելիսական հանդիսութիւններով:

Ոչ մէկ փառասէր կամ մեծամոլ՝ տեղ չի տար մտածողութեան մէջ փոքր կասկածի, թէ արժանաւոր մէկը չէ եւ արժանի չէ ժողովրդային գնահատութեան:

Կեանքի ամբողջ տեւողութեան կը վազեն հեւասպառ փառքի ետեւէն, փոխանակ սպասելու, որ փառքը հետեւի իրենց քայլերուն:

Չեմ սխալիր, եթէ ըսեմ, թէ սխալ ժամանակի մէջ կ'ապրինք եւ մարդիկ շփոթութեան մատնուած են ու չեն կրնար որոշել, թէ ո՞վ է արժանաւորը եւ ո՞վ անարժանը,

ո՞վ է գրագէտը եւ ո՞վ՝ գրագէտը, ո՞վ է բարեպաշտը եւ ո՞վ անբարիշտը, ո՞վ է ստախօսը եւ ո՞վ ճշմարտախօսը:

Կոյր բախտն է, որ կը տնօրինէ մարդուն եւ հասարակութեան ճակատագիրը, եւ ոչ թէ բանաւոր արարածը:

Հագուագիւտ կը հանդիպիս բարեմիտ ու բանիմաց մարդու մը, որ ցոլացնէ իր կերպարին վրայ անկեղծութիւնը եւ առաքինութիւնը:

Ներկայիս մարդոց մեծամասնութիւնը կը սնանի սուտով եւ կը շահի ու կը յառաջդիմէ սուտով: Ուրիշը խաբէլէ առաջ ինքզինքը կը խաբէ եւ ինքնախաբէութեամբ կը կերտէ իր մէջ... ստախօսը:

Փառքը, որ անժամանակ կու գայ գնահատելու երիտասարդի մը փանաքի վաստակը, կանխահաս է:

Փառքը, որ կու գայ ալեւոր մտաւորականի մը բարձրարժէք գրավաստակը դափնեպսակելու, շատ ուշ է:

Ոչ մէկ ժամանակ փառքը պատուած չէ արժանաւորը իր ողջութեան առոյգ տարիներուն: Սպասած է, որ գնահատութեան արժանի արուեստագէտը կամ մտաւորականը ծերանայ, տկարանայ, հիւանդանայ, հասնի իր մօտալուտ վախճանին եւ չես մահու փառաւորէ անոր յուսթի վաստակը:

Ափսոսալի է, այսպիսի արդար հատուցում մը՝ ալեւոր վաստակաւորի մը շնորհուի իր կեանքին մետասաներոդ օրերուն...:

Կիսագրագէտները եւ սոփեստները ճարպիկ են եւ գիտեն յանձնարարուած միջոցառումներով փութացնել փառաւորումը իրենց շնորհագորակ վաստակին:

Յոբելիսական տօնակատարութիւն մը, որ չի բխիր ժողովուրդի մը սրտէն, ատիկա՝ յանձնարարուած ու ապսպրուած հասարակ հանդիսութիւն մըն է, որ չի պատուեր հեղինակի մը արդար վաստակը:

Երբ ժողովուրդը կը հիւսէ ու կը դնէ դափնեպսակը արժանաւորի մը գլուխը, կը մնայ յաւերժօրէն անթառամ:

\*\*\*

Մարդու մը մտային տկարութիւնները դրուատալից գրախօսականով շողոմողները, կ'ապակասեն, ոչ միայն գրականութեան բարոյաշունչ մթնոլորտը, այլեւ կը խոշտանգեն հայերէն լեզուին բառերուն վսեմութիւնը:

Գումարներ, որ կը գանձուին գովեստի մուրացկաններէն, մերթ հինգ հարիւր տոլարէն ոչ պակաս, շահատակութիւններ են:

Հասարակութիւնը երկար կը համբերէ եւ ժամանակի յարմարութեամբ կը պատժէ մարդկային բարոյականը խաթարող վաշխառուները:

Այսօր, աշխարհի մէջ ծայրէն միւսը նիւթապաշտութիւնը եւ մարմնապաշտութիւնը կայսերական դիրքերու վրայ կը ճառագայթեն եւ մեղքը ու ամօթը ջնջած են իրենց առօրեայ յայտագրէն:

Անկախ մտածողութիւնը, սանձարձակ կեանքը, օրէնքներու եւ իրաւունքներու ոտնակոխումը թոյլատրելի դարձած են ընկերային բարքերու մէջ:

Բարոյագորակ մամուլն ալ լայն տեղ կու տայ իր էջերուն մէջ, այն գրութիւններուն, որոնք սիրային ու սեռային գրգռիչ պարունակու-

թիւն ունին: Մերօրեայ բորբոսած բարոյականով մարդը բարբարոս մըն է, իր ըմբոստ, անիշխանական, յախուռն արարքներով: Կը պայքարի կատաղօրէն ճշմարտութեան դէմ եւ կ'ուզէ, որ ամէն գործառնութեան մէջ սուտին գահակալութիւնը իշխէ:

Ամէն հասարակութիւն ունի իր մեծ ու պզտիկ կուռքերը, որոնք կը բարացուցուին մարդիկ, գնդախաղի, դերասանի ախոյեանական տիտղոսներով:

Մտաւորականը հանրաճանաչ հեղինակութիւն է այսօր, ոչ այնքան իր երկերով, որքան իր մասին եղած շունդայից փրոփականտով:

Որո՞ւ կրնանք վերագրել այս բարոյական սայթաքումները, ընթերցողի՞ն կամ հանդիսականի՞ն, որ այնքան դիւրին կը հրապուրուին հրատարակային ցուցադրութիւններէ:

Հասարակութիւնը միշտ ալ անարժանները պատուած են հերոսացուցած է գաճաճները:

Յետագայ չափածոյ մանրավէպը գրած եմ, այս յօդուածին առիթով:

Պրագիլի մէջ միջին դարերուն, յորդեր էր թիւը սնափառներուն

Ամէն վիճակի ու դիրքի մար-

դիկ, չունէին փառքէն զատ ուրիշ կարիք: Եւ թագաւորը մտածեց երկար, փրկել երկիրը մարդոցմէ չիմար:

Կ'ուզէր դաս մը տալ մեծամոլներուն, զգաստութեան լաւ դաս մը ամէնուն:

Տիտղոսներ հանեց ազնուականի, կոմսութեան կոչում, դուքսի, իշխանի,

Եւ ամէն քաղաքէ մարդիկ սնափառ, փութացին պալատ, շտապ, հեւասպառ:

Իւրաքանչիւր ոք ըստ իր եսութեան, գնեց տիտղոս մը փառասիրութեան:

Պետական գանձը, ոչ մէ ժամանակ, տեսած չէր այսքան ոսկի անքանակ:

Եւ թագաւորը ինքն ալ ապշահար, ի տես գանձին անհամար, Կանգնեց կեդրոնը մայրաքաղաքին, չիմարանոց մը, որ հոն ճարակին

Մտազարները սունկի պէս աճած, գովեստի քաղցէն հոգիներ հաշմած:

Գրեց ճակատը շէնքին միատառ, որ կարգան մարդիկ մնան ապշահար:

«Ասիկա նուէրն է սնափառներուն, մայրաքաղաքի ցաւագարներուն»:

## ՄԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2006-2007



\* Սրտի մեծ հրնուսնով եւ ուրախութեամբ դպրոցը կը յայտարարէ բացումը առաջին Հայ երկրորդական Վարժարանին Փասատիմայի եւ Կլեմտէյի շրջանին մէջ:

\* 2006-2007 տարեշրջանին դպրոցը պիտի մատուցանէ համալսարանի պատրաստական դասընթացքներ 9-րդէն մինչեւ 12-րդ դասարանները, եւ կը ծրագրէ տալու իր երկրորդական բաժնի առաջին շրջանաւարտները Յունիս 2007 թուին: Դպրոցը նաեւ կը դասաւանդէ Աստուածաշունչ, Հայերէն եւ Հայոց Պատմութիւն, եւ գանազան արուեստի դասընթացքներ:

\* Դպրոցի նախակրթարանը եւ Միջնակարգը արդէն իսկ որակաւորուած են WASC եւ ACSI հաստատութիւններու կողմէ: Իսկ երկրորդական Վարժարանը պատրաստական աշխատանք կատարած է եւ կը ծրագրէ մօտէն նախապատրաստելու, որպէս համալսարանի պատրաստական դպրոց:

\* Ուսուցչական կազմը կը բաղկանայ մասնագետ, փորձառու, հոգատար եւ նուիրուած անձեր:

\* Միջնակարգի եւ երկրորդական վարժարանի դպրոցավայրը կը գտնուի 3700 E. Sierra Madre, Pasadena. Ան ունի հսկայ դասարաններ, մատուռ, մարզադահլիճ, համակարգիչի եւ գիտական դասերու կեդրոններ, նաշարահ, եւայլն:

\* Դպրոցը կը հրաւիրէ աշակերտներ որոնք լրջօրէն կ'ուզեն հետեւիլ համալսարանի պատրաստման դասընթացքներուն:

\* Դպրոցը պատրաստ է նիւթական օժանդակութիւն տալու փայլուն եւ տիպար աշակերտներուն:

\* 2007 թուին, դպրոցը կը ծրագրէ 11-րդ եւ 12-րդ կարգի աշակերտներուն շրջապատյոյսի տանիլ դէպի Հայաստան:

\* Արձանագրութեամբ եւ յաւելեալ տեղեկութեանց համար հանցեմէ դիմել դպրոցի գրասենեակը (626) 798-5020 թիւին կամ այցելեմէ դպրոցի website-ը [www.sahagmesrobschool.org](http://www.sahagmesrobschool.org):



# ՇԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԲԺԻՇԿ ԹԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

## ՆԱԽԱԲԱՆ

Նախորդ յօդուածի մէջ, փորձ եղաւ ներկայացնելու այն տեղը որ հիպնոսաբուժութիւնը կը գրաւէ ժամանակակից բժշկական եւ դարմանական մասնագիտութեանց մէջ: Անիկա մենք կը նկատենք վաւերական միջոցառում մը, դասական եւ արեւելեան բժշկութեան կողքին, այն առաւելութեամբ որ հիպնոսաբուժութիւնը կը կայանայ այն տեսակը որ բոլորովին գերծ է այն քովնախի, երբեմն վնասակար ազդեցութիւններէ որ միւս երկուքը երբեմն կրնան պատճառել հիւանդի մօտ: Իր պատմութեան աւելի քան 300 տարիներու ընթացքին, երբեք չէ արձանագրուած ոչ մէկ դէպք որ վնասակար նկատուի հիպնոսաբուժութեան դիմորդներու մօտ: Կրնայ երբեմն պատահիլ որ ենթական եղածէն աւելի ենթարկուի հանգստեան վիճակին, եւ թեթեւ քունի մէջ մտնէ: Այս մէկը սակայն նոյնիսկ փափաքելի վիճակ կրնայ նկատուիլ անոնց համար, որոնք կը տառապին հոգեկան լուրջ տագնապներէ եւ անհրաժեշտ կ'ըլլայ զանոնք աւելի խորունկ հանգստացման ենթարկել (relaxation): Այս նախաբանէն ետք, տեսնենք թէ ի՞նչ սկզբունքներ հիմքը կը կազմեն հիպնոսաբուժութեան:

## ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՅՑ

Դասական բժշկութեան պարագային, ի՞նչ կը պատահի: Հիւանդը իր առողջական գանգատին համար կը դիմէ զինք դարմանող

բժիշկին: Եթէ հիւանդութիւնը թեթեւ է, եւ կարելի է մէկ այցելութեամբ կատարել ախտաճանաչումը, բժիշկը հարկ եղած դեղը կը նշանակէ, այն յոյսով որ հարցը արագ լուծում կը ստանայ: Այլապէս, լուրջ պարագաներուն, բժիշկը կարգ մը քննութիւններէ ետք, կը նշանակէ դարմանումի ձեւը, դեղերով կամ հիւանդանոցի միջոցաւ: Ի վերջոյ հիւանդը կամ կը բժշկուի եւ կամ, յոռեզոյն պարագային, վիրաբուժութեան կ'ենթարկուի: Այս ձեւով կրնայ հարցը լուծուի եւ հիւանդը կը վերագտնէ իր առողջութիւնը: Այս բոլորը մէկ կամ մի քանի այցելութիւններով կը վերջանայ:

Հիպնոսաբուժութեան պարագային, քիչ մը տարբեր մեթոտ կ'որդեգրուի եւ այս մասին է որ պիտի անդրադարձ ըլլայ այստեղ: Ուրեմն որդեգրուելիք մեթոտը հետեւեալն է.-

## Ա. ԵՆԹԱԿԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ԶԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒՆԵՐ

Առաջին հանդիպումի ընթացքին, ինչպէս միւս բժշկութեանց պարագային, հոս եւս ենթական իր գանգատը կը ներկայացնէ: Այս գանգատներու մասին ակնարկ եղաւ նախորդ յօդուածին մէջ: Գանգատը կրնայ կազմել տարիներու ընթացքին հաստատուած վատ սովորութիւն մը, ինչպէս ծխելու պարագան, կամ ստրեսային վիճակ մը, որ ենթակային մօտ զգացական եւ ֆիզիքական գանգատ յառաջացուցած է: Հոն կրնանք անվարան յայտնել որ հարիւրէ աւելի վիճակ-

ներ կան որոնք «բուժում» կրնան գտնել հիպնոսաբուժութեամբ: «Բուժումը» չակերտեցինք քանի որ այս «բուժումը» բժշկական իմաստով պէտք չէ հասկնալ, այլ կենցաղային, վարուելակերպային միջամտութեան իմաստով: Ծխելու պարագային, ենթական կը դադրի ծխելէ, կամ եթէ քրոնիկ ցաւէ կը տառապի, այդ ցաւէն կը ձերբազատուի: Եթէ իր մօտ ինքնավատահոլութեան պակաս գոյութիւն ունի, կրնայ զայն վերագտնել, եւ այսպէս, վատ սովորութեանց պարագաներուն:

## Բ. ԶԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒՆԵՐ ԵՆԹԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՒ ՏԱՅ

Մարդոց մօտ տեսնուած է որ սխալ պատկերացումներ գոյութիւն ունին հիպնոսաբուժութեան մասին, թէ ենթական քունի մէջ պիտի մտնէ, թէ իրմէ գաղտնիքներ պիտի առնուին, թէ «քնթրու» չի կարող չի ուր կրնայ կորսնցնել, թէ կրնայ սխալ կամ իր համոզումներուն մէջ խախտում կրնայ յառաջանալ, եւ այլն: Յստակ պէտք է ըլլայ որ այս յիշուածներէն ոչ մէկը կը պատահի: Ընդհակառակը, հիպնոսի ընթացքին, ենթական լման եւ ամբողջապէս արթուն է, կը հետեւի բոլոր գործողութեանց եւ ուզած ատեն, եթէ չհաւանի, կրնայ դադրեցնել եւ մերժել: Շատ կարեւոր է այս պարագան, քանի որ միտքը, իր երկու բաժիններով, գիտակից եւ ենթագիտակից, միշտ կը մնայ արթուն, նոյնիսկ աւելի արթուն քան իր գիտակից եղած պահուն: Այնպէս որ հիպնոսի ժամանակ, ենթական միշտ կը մնայ տէր կացութեան: Հիպնոսաբուժութեան դերը այս բոլորին մէջ, պարզապէս դրական միջամտողի դեր մըն է,

աւելին, գործակցութիւն մըն է որ կը հաստատուի ենթակային եւ հիպնոսաբուժին միջեւ, անախորժ սովորութիւնը չէզոքացնելու համար:

## Գ. ՍՏՔԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԶԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒՆԵՐ ՍԷՋ

Հիպնոսի վերաբերեալ այս տեղեկութիւններէն ետք, երբ փոխադարձ վստահութեան միջոցով մը կը հաստատուի ենթակային եւ հիպնոսաբուժին միջեւ, այս վերջինը կ'անցնի հասկնալու թէ իրեն ներկայացող ենթական ի՞նչ թելադրականութիւն, կամ ընկալողական ի՞նչ չատկանիչներ ունի: Այս մէկը խիստ կարեւոր հանգամանք մըն է քանի որ հիպնոսաբուժութեան ընթացքին, ենթակային տրուելիք թելադրութիւնները հիմնական նշանակութիւն ունին ներկայացող վատ ընթացքի վերացման համար: Խորքին մէջ, այս ցոյց պիտի տայ թէ ենթական ինչպէս կ'ընկալէ, ինչպէս կը սորվին, որպէսզի յստակ ըլլայ թէ ի՞նչ թելադրութիւններ եւ ինչպէ՞ս պիտի տրուին ենթակային:

Տրուած ըլլալով որ բուժման այս մեթոտը հիմնականին մէջ մտքի կառուցքին հետ կապ ունի, անհրաժեշտ է խօսիլ մտքի տեսութեան մասին որ հետեւեալ ձեւով կը ներկայանան «միտք» հասկացողութիւնը հիպնոսաբուժութեան մէջ ունի հետեւեալ բաժանմունքները:

## 1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ (PRIMITIVE MIND)

Նոր ծնող մանուկը իրենց հետ կը բերէ նախնական միտք մը, որ մարդու ծնունդէն ի վեր, կը ծառայէ

Շարք. էջ 15



**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**  
"Where the East Meets the West"

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**

**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**

**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**



ENJOY THE FOOD  
ALONG WITH THE LIVE MUSIC

**CALL FOR RESERVATIONS**  
**TEL 626-281-1006 626-587-1048**  
**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**



**BELLY DANCING**

**NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD**



ԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՈՂՆԱՇԱՐԸ

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

Հայ Գրերի գիտի 1600-ամ- եակին նուիրուած ՌԱՓ օփերայի լիբրետո, որի երաժշտութիւնը գրե- լու պատիւը վստահուած է միայն »Սիստեմ Օֆ Ը Դաուն« խմբին

ՆԱԽԵՐՈՒՄ

Մեր ողնաշարը մեր Այբուբենն է, մեր ողնաշարը փորձեն են հեր- քել,

մեր տէրը յաւերժ Յայկ Նահա- պետն է, Ի՞նչ Կոպեռնիկոս, կամ էլ ինչ Յեզեկ:

Ո՞վ չգիտէ, որ անպարտելի ենք, ցեղակրօն ենք, տիեզերածին, հազարների մէջ նկատելի ենք, ազնուազարմ ենք եւ Արիացի:

Մեր ողնաշարի 36-ով արեւազուն ենք, աստուածա- յինն ենք, 1600 տարուայ ուղերձով կենդանակերպի աշխօային ենք:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ՝ Ա-ԻՑ ՄԻՆՉԵՒ Զ-Ը

Մեր Ա-ն Արեւ է, Աստղիկ, Արա- գած, Աբովեան, Անի, Արարատ, Աստ- ուած:

Մեր Բ-ն Բակունց է, Բոց է Բագի- նի, Բարութեան Բողոք, Բիբ Բիւ- րականի:

Մեր Գ-ն Գրերի Գիտն է Գերա- գոյն, Գաղափար Գոյի, Գոշ է, Գառնի, Գունդ:

Մեր Դ-ն Դուրեան է, Դուին է Դրօշ, Դպրոց է Դարբին, Դար է ու Դրոշմ:

Մեր Ե-ն Երկիր է, Երգ է, Երեւան, Եղիշէ, Երդուն, Երկինք ու Եր- ուանդ:

Մեր Զ-ն Զոհրապ է, Զօրակոչ զարթուն, Զուարթնոց ու զօրք ու Զանգա- կատուն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ Է-ԻՑ ՄԻՆՉԵՒ Լ-Ը

Մեր Է-ն Էակ է, Էջք է Էական, Էջմիածին է Էլետրական Մեր Ը-ն Ընթացք է, Ըմբոշխման Ընկան, Ըմբոստութիւն է Ընկերվարա-

կան: Մեր Թ-ն Թոնիր է թագաւորա- կան, Թումանեան, Թատրոն, Թուր ու Թանգարան:

Մեր Ժ-ն Ժպիտ է, Ժողովուրդ, Ժանեակ, Ժամադրութիւն, Ժայթման Ժա- մանակ:

Մեր Ի-ն Իշխան է, Իսահակեան է, մեր հնչիւնների իղձն իրական է:

Մեր Լ-ն Լուսին է, Լուցկի ու Լա- ւա, Լաւութիւն, Լեօ, Լեռ, Լուացք, Լաւաշ:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ՝ Խ-ԻՑ ՄԻՆՉԵՒ Դ-Ը

Մեր Խ-ն Խաչքար է ու Խորենա- ցի, Խաղաղութիւն է, Խրամատ, Խե- ցի:

Մեծ Ծ-ն Ծիրան է, Ժիածան ու Ժափ, Ծերենց է, Ժողիկ, Ժիծեռնակ ու Ժոպ:

Մեր Կ-ն Կորիւն է, կայծակ է, կամուրջ, կրակ ու կաթ է, Կարին է, կա- պարճ:

Մեր Զ-ն հաւատ է, Զայրենիք, Զող է, Զայաստան,

Մեր Զ-ն ձմեռ է, ձմեռակ ու ձեռք, Զայն ու ձիաւոր, ձու, ձաւար, ձօներգ:

Մեր Դ-ն Դողանց է, դանձիլ է ու դախ, Դեռնդ է, Դարս է, դէկ ու Դարա- բաղ:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ՝ Ճ-ԻՑ ՄԻՆՉԵՒ Ո

Մեր Ծ-ն ճրագ է, ճիգ ու ճառա- գայթ, Ծշմարտութիւն է, ճամբայ է, ճա- կատ:

Մեր Ս-ն Մասիս է, Մեծարեմց, մասուր, Մոմ է, մագաղաթ, մշակոյթ, մա- տուռ:

Մեր Յ-ն Յար է, յասաման, յաղթանակ:

Մեր Ն-ն նշխար է, նուռ, նպա-

տակ, Նարեկացի է, Նոյ է, նահատակ: Մեր Ծ-ն շոյանք է, Շանթ է, շրջա- նակ, Շիրազ է, շառաջ, շոռոյ ու շագա- նակ:

Մեր Ո-ն Որդան է, ոգու ողնա- շար, Որոտի ոստիւն, ողբ ու որձա- քար:

ՄԱՍ ՇԻՆՉԵՐՈՐԴ՝ Զ-ԻՑ ՄԻՆՉԵՒ Վ-Ը

Մեր Զ-ն Չարենց է, չափէ, չա- փանիշ, Չորսու է, չամիչ, չղջիկ է, Չաւուշ:

Մեր Պ-ն պայքար է, պանդուխտ է, պատիժ, Պարոնեան, Պախուրց, պարտք, պատանդ, պատիւ:

Մեր Զ-ն ջութակ է, ջրօրհնէք ու ջիղ, Զահ է, ջերմութիւն, Զիւանի ու ջուր:

Մեր Ռ-ն ռափ է, ռեհան, ռունգ, Ռնգեղջիւր է, Ռագմիկ է, ռունք:

Մեր Ս-ն Սեւակ է, սաղաւարտ ու սէր, Սիրտ է, սածիլ է, սաղարթ է ու սերմ:

Մեր Վ-ն Վիրապ է, Վարդանանք, Վճիռ, Վերելք, Վարուժան, Վարդա- վառ, Վճիտ:

ՄԱՍ ՎԵՏԵՐՈՐԴ՝ Տ-ԻՑ ՄԻՆՉԵՒ Բ-Ը

Մեր Տ-ն Տէրեան է, Տիեզերք, տագնապ, Տաղանդ է, տուն է, տենչանք է ու տապ:

Մեր Ր-ն Րոպէ է, Րաֆֆի է վար- պետ, Ոչ Րաբբի է, ոչ Րաբունապետ:

Մեր Ց-ն ցասուն է, Ցեղասպան երեկ, Ցնցուղ է ցաւի, ցատկ է ու ցերեկ: Մեր ՌԻ-ն ուղեղ է, ուսում է, ուխտ է, Ուրարտու, ուղի, ուրց, ուռկան, ուղտ է:

Մեր Փ-ն փրկիչ է, Փարպեցի, փաղանգ, Փոթորիկ, փեթակ, փիղ, փոց ու փակամք:

Մեր Ք-ն Քուչակ է, Քրիստոս, քաղաք, Քթոց, քղամիդ, քարանձաւ, քղանցք:

ԵՆԹԱՄԱՍ

Եւ ի՞նչ է մնում, եւ եւս եւա, Օրէնք, օրհնութիւն, օջախ, ովկ- իանոս:

Օրացոյց, օրօցք, օղ, օդապա- րիկ, Օրրան, օթոց, օգնութիւն, Ֆրիկ:

ՎԵՐՉԵՐԳ

Մեր հազարամեայ մեծ ճանապ- հով Վկայութիւնն ենք վերանորոգում Մեսրոպ Մաշտոցի հոգեւոր սի- րոյ, Սահակ Պարթեւի աշխարհիկ ոգու:

Մեր մեծատառը մեր հին որակն է, Մեր փոքրատառը քանակն է մեր նոր, Յայոց ստնտուն կենաց ծորակն է,

Որ լոյս է վերին՝ վարում վիրա- ւոր: Մեր Այբուբենն է մեր ողնաշարը, Յանց Արամազդի ատամնաշա- րը,

Ճերմակ է, փայլուն, մաքուր- թեամբ հօգօր՝ Միշտ յանուն վաղուայ, երկ եւ այսօր:

ՇԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մարումակուած էջ 14-էն

վերապրումի (survival): Այս վերապրումը ունի երկու բաժիններ, ատոնցով նախնական մարդը ինքզինք կը պաշտպանէր իրենց սպառնացող վտանգին դէմ: Այս երկու բաժինները կը կոչւին դիմադրութիւն կամ փախուստ (fight-flight): Այս երկուքով օժտուած է նորածին մանուկը: Մտքի մնացեալ մասը կը բաղկանայ բոլորովին մաքուր էջէ մը, տախտակի նման որուն վրայ կու գան արձանագրուիլ, կամ դրոշմուիլ կեանքի փոփոխութիւնները: Ուրեմն, նախնական մտքի կողքին, մանուկին ծնած օրէն մինչեւ 7-ը տարեկան, անոր միտքը կը լեցուի իր ստացած տպաւորութիւններով, որոնք տեսակ մը իր կեանքի արձանագրութիւնն են (life-script): Այս բոլորը ունին երկու հանգամանք - հաճելի եւ տհաճ - եւ կը պատկանին մանուկին մտքի ենթագիտակից մասին: Ուժը տարեկանէն ետք, մանուկի մօտ կը սկսի գիտակցութիւն արթնանալ, որ կը յատկանշուի տրամաբանութեան, մտածումի, վերլուծումի, կամքի եւ որոշում առնելու երեւոյթներով: Այս վերջինները կը պատկանին մտքի գիտակից մասին: 2. Ուրեմն նախնական մտքի կողքին, մանուկը կը զարգացնէ

գիտակից եւ ենթագիտակից մասե- րը, իւրաքանչիւրը իր ունեցած պաշարով եւ կարողութիւններով: Պատկերը այս ձեւով չի վերջանար սակայն: Գիտակիցի եւ ենթագի- տակիցի միեւ գոյութիւն ունի փոքրիկ մաս մը որ կարեւոր դեր կը կատարէ: Այս փոքրիկ մասը կը նկարագրուի իբրեւ գտիչ մաս (filter), որ տեսակ մը «քոնթրոլ» կը հաստատէ գիտակիցէն ենթագի- տակից անցնող տպաւորութեանց, գրգռներու: Հոս պէտք է կարեւորութեամբ շեշտել որ մտքի գիտակից մասը կը կազմէ միայն 12 տոկոսը մտքին, իսկ 88 տոկոսը կը բաղկանայ ենթագիտակից մտքին: Յստակ է ուրեմն որ ինչ կարեւոր դեր կը խաղայ ենթագիտակիցը մտքի կա- ուոյցին մէջ: Հիպնոսի ժամանակ, ուրեմն, տեղի կ'ունենայ հետեւեալ գործողութիւնը - գիտակից մասը ձեւով մը կը «քնանայ», որպէսզի կարելի ըլլայ թափանցել ենթագի- տակիցին մէջ, ուր ամբարուած են անհատի մը ունեցած բոլոր հաճելի եւ տհաճ սովորութիւնները: Հիպ- նոսաբուժութիւնը ենթագիտակի- ցէն ներս թափանցում մըն է, որ հիմնական բուժման մեթոտը կը հանդիսանայ:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 2)

Jessica Demirdjian REALTOR Prudential California Realty 9878 Hibert Street San Diego, CA 92131 Bus 858 653-6400 Fax 858 653-6440 Cell 619 846-7738 jessicad@prusd.com



# ԴԷՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ... ԻՆՆՍՈՒՆ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

## ՊՕՂՈՍԱԳԻՍԵԱՆ

(Շարունակում և խորքային) Եւ այլ մի իմաստուն երգահան՝ Արմէն Մանդակունեան, ունկնդրելով այդ պարեղանակները, Կոմիտաս վարդապետի նման գնացել է նրանց ակունքները պեղելու եւ բերել այնտեղից հայ երգի ոգու խորհուրդի հնչիւնները, անաղարտ պահելով Մուսա Լերան հայոց պարեղանակների կշռոյթները:

Թմբկահարն է անուշ կշռոյթով զարկում թմբուկին, պարողները կարծես լենած հովիկների թեւերին, նրանց հետ քնքուշ օրորում են: Ուժգնանում է թմբուկը, ծովանում են պարողների շարքերը, իրենց լերան ժայռեղէն կողերին փոթորկած հայոց ծովածոցի ջրերի ալիքների նման պոռթկում է հարթակը, զարկում են գետնին, շարժում է բլուրը: Յուշարձանն իր կարմիրն է ցօղում հարթակին, արեւի ճառագայթներից քաղած կրակի փունջերը խուրձ-խուրձ նետում ուխտաւորներին, նետում դէպի իրենց քարէ սրտի սպիտակ գագաթին, որտեղ իջած իրենց հին աստուածները պարի փոթորիկ են ցանում իրենց հոգիներին:

Թմբկահարն է զարկում մարտակոչի, մարտահրաւերի դաշույնապարի պարեղանակը, զոյգերն են հարթակում, ամէն մէկը որպէս մի դիւցազնացած Հայկ՝ խոյանում, զարկում, նահանջում, փոթորկում պարի ալիքի յորձանքներում, արեւացած դաշույնները իրենց ճառագայթներն են ցանում կարմիր յուշարձանին: Տեսել ես այդ պարի ուժի կշռոյթը, լեռնականի կորովի ոգին է այնտեղ, հապա երբ արեգակը դաշույնների վրայ իջած ինքն էլ նրանց շեղբերին չենած պար գալիս, եւ ինչպէս պիտի չխնայեմանաս: Այս Նաւասարդ է յաղթանակի, նաւասարդեան ցնծութիւն, եւ իրենց նախնիների կորովի ոգով կարմրացած պարմանների հայեացքների հեթանոսական կարմիր ժպիտ է հոսում:

Եւ թմբկահարը զարկում է «Հէլէ, Հէլէ Նիհնօ» պարեղանակը: Այս արդէն Մուսա Լեռցու օրհներգն է, իրենց սոնական ցնծութիւնների խոյանքը: Հարթակում են այրեր ու կանաչք, պարման ու պարմանուհիներ, հարսանեկան պար էին բռնել առանձին, խմբովի, պարի եղանակի հետ կանանց իւրովի բացականչութիւններն թնդում, երկինքը կապոյտ քնքուցութիւն էր ցանում հարթակին, արեւն էր պարի կրակ տեղում նրանց սրտերին: Հարսի ու փեսայի նազանքի հրճուանքով էին պար գալիս, նրանց դէմքերից, նայուածքներից, աչքերից իրենց արմենական արեան կարմիր ցոլքերի ալիքներն էին հոսում: Իսկ ալեհերները, սլացած իրենց հարսանեկան հանդէսներին, երեւի նրանց յուշերով էին այսօր պար բռնել, թէ ինչպէս էին այժմ օտարացած իրենց տների բակերում խնձոյթի թմբուկ զարկել, թէ իրենց հարսանեկան թափօրները ինչպէս էին ճողբել ջրերը իրենց գետակի ու ջրուել նրա պաղ ջրով, ափսոս:

Լերան կուռի 90 ամեակի ոգեկոչումները, նրա հերոսական սխարանների խոյանքների թնդիւնն էին հայոց փոքրացած աշխարհի այս բլուրին: Թմբուկների զարկերը, նրանց առասպելականացած ինքնապաշտպանութեան կուռի գէն-

քերի շաշիւնների արձագանգներն էին: Տանուլ տուինք, կորցրեցինք շատ-շատ,, լաւ է որ չենք մոռանում...: Մեղաւորը՝ միայն մենք ենք, այն մի փնտռէք օտարի մէջ, ինչու գէնքին չապաւինեցինք եւ այն ազգը որ չի կարող ինքնապաշտպանութեան դիմել... դատապարտուած է կործանման:

Սեպտեմբերի երկրորդ, երրորդ շաբաթներին, հայոց աշխարհի մայր ոստանում, քաղաքներում, աւաններում, դպրոցներում սոնական խանդաղատանքով յիշատակել էին Մուսա Լերան բարձունքներին մղուած յաղթական դիւցազնամարտի 90 ամեայ տարելիցը:

Երեւանի համերգային փոքր դահլիճում այն նշուել էր խուռնեւորամ մասնակիցներով, պետկան մակարդակով կազմակերպուած սոնակատարութիւն, որտեղ ելույթներ էին ունեցել յայտնի մտաւորականներ:

Հայաստան աշխարհի արեւելեան կողմը, վշտից փոթորկած Մայր Արաքսի ջրերի այս կողմն էին «վերադարձել» բազում օտարացած աւաններ, քաղաքներ՝ Անի, Ջէյթուն, Հաճըն, Խարբերդ, Մարաշ, Սեբաստիա, Տիգրանակերտ, Արմաշ, Արէշ, Գամրակ, Սասունիկ եւ յաղթանակի դաբնեզարդ փառքով կարմիր Մուսա Լեռը: Այդ լեռնոտ շէնքեր եկել էին ու հանգրուանել յաւերժական ձիւնի թագով իրենց ոգեզմայլ Արարատի դիմացի հարթ դաշտ, ինչքան մօտ է այն, ձեռքը երկարես կը հասնես, թշնամու գէնք կայ նրա կողերին, չեն թողում շոյցս իսկ նրան, նայում է նա մեզ իր քարէ սրտով, իսկ մենք դիտում ենք նրան՝ ոգիանում թէ ցաւից հոգեմաշ լինում: Կարմիր յուշարձանի բլուրին եւ յարել աւանը՝ Մուսա Լեռ աւանը: Եւ հայրենի բնաշխարհի այդ աւանի հայեր՝ Մուսա Լեռցի էին կոչում: Դպրութեան տուն, դպրոց կայ այնտեղ «Փրանց վերֆել» ի անուան դպրոցը: Տիեզերական հուրով բռնկած այդ Եբրայեցի աշխարհներ տարաւ այդ լեռան վրայ ահագնացած մարտերի որոտների յաղթանակի փառքը: Հանդէս էր այդ օրը դպրոցում, իրենց հեռու լեռան 90 ամեայ դիւցազնամարտի տարելիցի սոնախմբութիւն: Դպրոցի մայր դռնից ներս, եւ պատերից նայում են քեզ ինքը՝ վերֆելը, կարմիր յուշարձանի ճակատին քարացած գինականները, քաջամարտի բազում դիւզագունները: Քէպուսից, Մուսա Լեռցի յայտնի մտաւորական՝ Գէորգ վրթանէսեանի դպրոցում Փրանց վերֆելի անկիւն է ստեղծել: Դպրոցի բարեկիրթ տնօրէնուհին ազդարարում է Մուսա Լերան 90 ամեակին նուիրուած սոնական հանդէսի բացումը: Բեմում են Մուսա Լեռցի տղաներ ու աղջիկներ: Արտասանում են, Տէմիրճիպաշեանի, Վարուժանի, Սիամանթոյի, Թէքէեանի, Սեւակի, Չարենցի դիւցազնական պոէմները եւ սրահն է պոռթկում բանաստեղծների հանճարի տիեզերական ոգու թռիչքներով: Իրենց լեռան դիւցազնական շունչով լեռնացած տղաներն ու աղջիկները՝ յաղթանակի շողերով կարմրած դէմքերով երգում, պարում, ցնծում են, արդեօք այստեղ չէին իջել նաեւ իրենց կուռի մարտական քաջերի հոգի-

ների ստուերները: Ողջոյնի հայրենաշունչ ելույթներով հանդիսականներին են դիմում Կամօ Տէր-Պետրոսեանը, Պիթիասցի յայտնի մտաւորական, բազմամեայ մանկավարժ՝ Արտաշէս Պալապանեանը եւ ինչքան էր նրանց խօսքը հպարտ ու ոգեշունչ:

## ԴԷՊԻ ԵՐԵՒԱՆ

Ես այս քաղաքում՝ հայոց աշխարհի մայր ոստանում, ոչ զբօսաշրջիկ եւ ոչ էլ հիւր եմ, երկար բացակայութիւնից յետոյ եկել եմ ուխտի, որպէս ուխտաւոր մասնակցելու իմ ծննդավայրի չխամրող փառքի պանծալի օրերի 90 ամեակի սոնախմբութեանը: Խաղողի այգիները գրկած խճուղիով Երեւան եմ գնում: Խճուղիի երկու կողերին է փուռել փարաքար աւանը, ճամբեզրի թթենիներն են շարան, շարան բարեւի կանգնած անցորդներին, սուրացող ինքնաշարժերին: Ծառերի կանաչից դուրս են յորդում ծուխի սիւներ՝ օճախներում յարատեւող կեանքի հուրն է բարձրանում դէպի երկինքի կապոյտը: Այգիներ են գրկել աւանը, իրենց կանաչ հուրն են փուռել տներին: Օղային նաւերն են հունդիւնով իջնում աւանի դաշտերում երիզուած ուղիներին, որ գնան հանգչելու կայանի շէնքի մատոյցներին: Ջուարթնոց օդակայանն է այն, երեւի այն այդպէս են անուանել որ երկնային թռիչքի խոռովից յետոյ, մայր հողին հպող ճամբորդների սրտերին զուարթութիւն յորդէր: Փարաքար, հայոց աշխարհի հին բնակատեղիներից: Այնտեղ պեղուած հելլենական դարաշրջանի սուֆակերտ շինութիւնում գտնուել էին արեւելքի մեծագոյն արքաներից՝ Տիգրան Բ. արքայից արքայի հայկական պետութեան ձուլած դրամներ, նաեւ նրա որդի՝ հայոց առաջին թատերագիր Արտաւազդ Բ. արքայի դրամ: Փարաքարի ճամբեզրի տների քարէ պատերի շարքերի արանքներում փայտեայ գերաններ էին ազուցուած, ճիշդ այնպէս ինչպէս իմ հայրենի տան ճամբեզրի քարէ պատին գերան կար: Ջարմացել էի, սակայն մեր իմաստուն նախնիները այդ նորարարութեամբ մտայղացել էին չիւնութիւններին հաղորդելու երկրաշարժերի ցնցումներին մեղմացում, փափկացում:


Արգաւանդ աւանն է դիմաւորում ինքնաշարժերին, շքեղ է դարձել նա, վաճառատներ, ճաշարան-

ներ, խաղատներ, արդեօք Հայաստանի Լաս Վեկասը չէ այն: Եթէ գիշերը մտնէին այնտեղ, արեգակը իր եօթ գոյների լոյսերին ծիածանն էր փուռում, թէ ինքը արեգակն էր իջնում այդտեղ՝ խաղատների այրերի արեցած հոգիներին, սրտերին եռանդ վառելու, Արգաւանդի հրապարակի անցորդներին արեւային ողջոյն փուռելու: Չղջում եմ հիմա թէ ինչու չաչցելեցի այդ խաղատներ: Ազատ ժամանակի պակաս, թէ ես արդէն չազեցած եմ խաղատների «վայելքից» ահ, այդ դժոխային մեքենաների աշխատանքը, նրանց ամաններում գրնգացած մետաղեայ դրամների բարձր հնչիւնների բամբերը, ամբարիշտ... նման առինքնում են քեզ դրամ կորզելու, այնուհետեւ ծովահէնների նման կողոպտում քեզ: Ասում էին խուռներամ խաղացողներ են լինում այնտեղ, սակայն ոչ այստեղի նման թոշակաւորներ եւ միջին դասակարգի մարդիկ: Յղփացած նոր հայեր են այնտեղ, մսխում այն ինչ որ արդար վաստակով չէին դատել:

Արգաւանդի ու ձախ կողմի «Անդրանիկ» թաղամասի խաչմերուկում, Արարատեան դաշտի միրգ ու բանջարեղէնի շուկայ է, սակայն ոչ այն խղճուկ շուկան որ նոյն տեղում էր տարիներ առաջ: Այժմ նախազարդ ու հմայիչ կրպակներ ու վաճառասեղաններ են այնտեղ, որտեղ բլրացած են ընտրովի միրգն ու բանջարեղէնը: Վաճառողները արեւացած դէմքերով ունչապարներ էջին, հագուած ու զուգուած քաղաքացիներ էին: Ասում էին, առաւօտները վերավաճառող քաղաքացիները, երբեմն էլ ստիպողաբար, գիւղացու արտադրանքը գնում են ու ապա մի քանի անգամներ աւելի սուղ վաճառում այստեղ, այդպէս է նաեւ բոլոր շուկաներում: Այդպէս է նաեւ հանրապետութիւնում, գրկել են գիւղացուն իր արտադրանքը արտահանելու իրաւունքից, եւ իրենց դեղակների տարածքում եկեղեցիներ կառուցած անաստուածները իրենց էին մթերել այն եւ կորզել արտահանման շահոյթը: «Պուրժուա», հարուստ դասակարգը արեւմուտքում գոյացել է երկար ժամանակի հատուածում, իսկ Հայաստանի «Պուրժուազիան», մափիանակացած մարդիկ, իշխանութիւնների հետ կողոպտելով ժողովուրդն ու նրա եօթանասուն տարիների արարա-

Շարք էջ 18

ՄԱՍԻՍ ԹՈՒԹՅՈՒՆ



**ԱՐԵՎԼԵՌԱՆ ԵՏԻՆ**

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ**  
**Սահակ Թուֆեանի**  
**«ԱՐԵՎԼԵՌԱՆ ԵՏԻՆ»**  
**Հայրենական**  
**Օրագիրը**

**Ստամբուլ համար**  
**դիմել հեղինակին՝**  
**Հեռ. (818) 563-6174**

**կամ հետեւեալ**  
**գրախանութները**  
**Կլէմտէյլի մէջ**  
**Սպրիլ՝ (818) 213-4112**  
**Պերմ՝ (818) 244-3830**  
**Սարդարապատ՝**  
**(818) 500-0790**



# ԱՆՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԼՍԵԼԻՍ՝ ԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԳԼԽԱՐԿ ԵՍ ՎԱՆՈՒՄ... ԳՈՒՐԳԷՆ ՏԻԳՐԱՆԻ ՉՈՒԱԽԵԱՆ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Մտուել է 1909 թ. Մայիս 9-ին Ալեքսանդրապոլում (այժմ Գիւմրի) 1928 թ-ին աւարտել է Երեւանի ինդուստրիալ տեխնիքումը, Մոսկուայի բարձրագոյն տեխ. ուսումնարանը՝ ինժեներ-էլեմէնտար մասնագիտութեամբ: 1934-36 թ. աշխատել է Ձերժինսկու անուան հաստոցաշինական գործարանի գլխ. ինժեներ, 1939 թ. նշանակուել է ՀՍՍՀ տեղական արդիւնաբերութեան ժողկոմ (նախարար.) 1941 թ. նշանակուել է ՀՍՍՀ կառավարութեան նախագահի տեղակալ:

1945-47 թ. Մոսկուայում Հայաստանի մշտական ներկայացուցիչը: 1948-55 թ. դիրեկտոր էլեկտրոմեքենաշինական գործարանի (447): 1955-57 Երեւանի քաղսովետի նախագահ: 1957-1964 թ. Հայաստանի ժողտնտխորհի ել. տեխնիկական վարչութեան պետ, նախագահի տեղակալ, յետոյ նախագահ: 1966-72 թ. իր իսկ ստեղծած միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտի գլխաւոր տնօրէն:

Վախճանուել է 1992 թ-ուի Դեկտեմբեր 26-ին:

Այս չոր, սառը, անիսոս թուերը, գրեթէ ոչինչ չեն ասում, Հայաստանի արդիւնաբերութեան եւ ժողովրդական տնտեսութեան ստեղծման ու յետագայ զարգացման ամենանշանակալից ու տաղանդաւոր կազմակերպիչներից մէկի՝ մեծ Գիւմրեցու եւ մեծ հայի Գուրգէն Չոլախեանի ամբողջական կերպարի մասին: Իմ կարծիքով Գուրգէն Չոլախեանը, իր տեսակի, տաղանդաւոր ղեկավարների մէջ, իրենց իւրապատուկ ազնուական խառնուածքով, արտադրութեան գիտական կազմակերպման առանձնապատուկ արուեստով, ամենաբարձր աստիճանի, ամենահազուադիւտներից էր:

1999 թ. իշխանութիւնները վերջապէս չիչեցին նրա մասին եւ հասարակութիւնը նշեց Գուրգէն Չոլախեանի ծննդեան 90 տարին: Այս կապակցութեամբ նրա մասին տպագրուած բազմաթիւ յօդուածների միայն վերնագրերը պատիւ կը բերէին շատերին: Այսպէս ռուսական մի լրագիր յօդուածը վերնագրել է «Արտադրութեան տաղանդաւոր կազմակերպիչը» - միւսը «Նոր ժամանակները» Հայկական ինդուստրիայի ասպետը», իսկ Երեւանի քաղսովետի բոլոր ժամանակների ամենաերեւելի նախագահ Գրիգոր Հասրաթեանը նշում էր, որ Գ. Չոլախեանը քայլով հանրագիտարան էր, եւ որ նրա կառավարման հարուստ փորձը - լաւագոյն դասադիրքն էր երիտասարդ կադրերի համար:

Գուրգէն Չոլախեանը չէր հանդուրժում սուտը, կեղծիքը, ատում էր քծնանքը, վնասակար ձեւակաւնութիւնը:

Ասում էին, որ նրա վերեւներում առանձնապէս, չէին սիրում: Նա, երբեմն յանդգնում էր չհամաձայնուել «վերեւից» եկած սխալ որոշումների հետ:

Մի անգամ, քաղսովետի սեսիայում, տրուելիք հաշուետուութիւնը պատրաստ էր երթադիտմի քարտուղարը պահանջում է այն ներկայացնել իրեն ստուգելու:

Չոլախեանը սա ընդունում է որպէս անվստահութիւն եւ վիրա-

ւորանք եւ հասկանալի է, չի ներկայացնում: Սեւիայում իր փայլուն հաշուետուութիւնից յետոյ, նա ներկայացնում է իր հրաժարականը: Այսպիսի բազմաթիւ դէպքեր հետեւանք էր այն բանի, երբ որոշ ղեկավարներ իրենց գիտելիքներով գիշում էին իրենց ենթականերին:

Մի անգամ, երբ ես Հրուշակեղէնի - Մակարոնի կոմբինատի տնօրէնն էի, զանգում եմ Գ. Չոլախեանին, խնդրում եմ ընդունելութիւն:

Ի պատասխան, լսում եմ նրա զայրացիկոտ ձայնը՝

«Ձեզ, ոչ թէ ընդունել, այլ դատապարտել է պէտք, չարաշահումների համար...» եւ վայր է դնում խօսափողը: Ես ոչինչ չհաս-

կանալով նոյնպէս զայրացած, գալիս եմ ժողտնտխորհ բացատրուելու: Նախագահը արդէն տեղում չի... նախագահի օգնական-Նանուշեան, մի շատ համակրելի կին - զարմացած հարցնում է. «Ձեզ ի՞նչ է պատահել, ընկ. Կարապետան, ձեր երեսին գոյն չկայ, նստէք, հանգստացէք, խօսենք...»

Պարզում է, որ մի տգէտ չինովնիկ, Գ. Չոլախեանին թիւրիմացութեան մէջ է գցել, սխալ բացատրութիւն տալով արտադրութեան տեխնոլոգիայի մի հարցում:

Հաստատուած բաղադրումով թոյլատրում է հումքի բացակայութեան դէպքում «կակաս» մթերք» ստանալ կարգի, կակասօփոշի եւ շաքարաւազի խառնուրդով, որի դէպքում գերմանախօսուում է էժանագին հումքը՝ եւ զգալիորէն խնայում է բնական, աւելի թանկ կակաս մթերքը:

Տիկին Նանուշեան Գ. Չոլախեանին բացատրում է եղելութիւնը եւ ինձ հրաւիրում են նրա մօտ:

Ջարմանալիորէն ինձ սիրալիւր է ընդունում, կարծես մեղանչելով իր անարդար յանդիմանութեանը: Այդ անչափ զբաղուած ղեկավարը ինձ պահում է ժամ, այդ միջոցում լուծելով կոմբինատի բազմաթիւ խնդիրներ...

Ոգեւորուած այդ սիրալիւր ընդունելութիւնից ես համարձակում եմ նրան անկեղծօրէն ասել, որ «շատերը կարծում են, որ դուք երբեք չէք ժպտում, նա ինձ «ընդհակառակը ես ժպտերես եմ, բայց անտեղի եւ անիմաստ երբեք չեմ ժպտում»:


Այս հանդիպման ընթացքում նա մերժեց ընդունել բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաների ասելով ինձ մօտ տնօրէն է նստած

Շար.ը էջ 19

## Jansezian Law Firm, PC


A Professional Law Corporation

Common Sense  
and  
Cost-Efficient  
Solutions  
to All Your  
Legal Issues



Nazareth V. Jansezian, Principal Counsel

**Business Law • Personal Injury**  
**Family Law • Civil Litigation**



Glendale Plaza, 630 North Central Avenue,  
Seventeenth Floor, Glendale, California 91201  
Telephone (818) 449-8828  
Facsimile (818) 449-8289  
info@jansezian.com  
www.jansezian.com

Initial Consultation Free of Charge  
Ample Valetted Parking Available



### ԴԵՊՈՒ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ...

Շարունակում է էջ 16-էն

ծը... կարճ ժամանակահատվածում անբաւ հարստացաւ... եւ ինչ՝ միլիոնատէրեր բազում:

Արգաւանդից դէպի մայր ոստան տանող խճուղիի աջ եզրին երկու սիւնների մէջտեղը լայնատարած թեւերով արծիւն է բազմել՝ պատրաստ խոջանալու: Կողքին Երեւան քաղաքի մուտքի ազդը՝ երեք լեզուներով: Երեւան, տեղեակ չէին մեր մայր ոստանի ծնունդի մանրամասներին, երբ միայն 1950 թուականի Սեպտեմբեր 25ին Արին Բերդի պեղումների ժամանակ յայտանաբերուել էր քարի վրայ փորագրուած արձանագրութիւնը, որ Ուրարտու-Ուրուաշտու-Արմինա-Արարատեան թագաւորութեան հզօր արքայ Արգիշտին, նախքան մեր թուարկութիւնից 782 թուականին, Արարատեան դաշտում հիմնադրել էր այդ քաղաքը որպէս վարչական կեդրոն, որպէսզի՝

«Խաղա աստուծոյ մեծութեամբ Արգիշտին, Մէնուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց եւ անուանեց էրէբունի քաղաք՝ ի գօրութիւն Բիանայի եւ ի անաբեկումն թշնամու երկրի:

Արգիշտին ասում է, հոգն այստեղ ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խաղա աստուծոյ մեծութեամբ, Մէնուայի որդի Արգիշտին, Բիանայի հզօր թագաւորը, Տուշպա քաղաքի տէրը»:

Յիշում եմ, 1950 թուական, ցնծութիւն էր Երեւան քաղաքում, իրենց ոստանի ծնունդի քարեղէն մատենան էր պեղուել, որ հուշակուում էր աւելի հին քան Հռոմէն ու Աթէնքը: Եւ ինչու չիշատակեմ այդ սեպագիր արձանագրութեան առաջին վերծանող-ընթերցողին, նա ինքը, հայոց գիտութեան կաճառի գիտական աշխատակից, պատմաբան, արեւելագէտ, ուրարտագէտ՝ Մարգո Իսրայէլեանին, այդ խոնարհ ու իմաստուն հայուհուն: Նրա ընտանիքի հետ նոյն շէնքում էինք բնակուում, բարեկամական եւ մտերիմ յարաբերութիւններ էինք հաստատած եղել եւ այդ դաժան տիրապետութեան ժամանակ իսկ ինքը հայոց պատմութեան սիրով էր փոթորկած:

Երեւան քաղաքի այժմեան տարածքը ու մերձակայքը բնակեցուած է եղել շատ հին ժամանակներից, որոնց շինութիւնների հետքերը վերաբերում են մինչեւ իսկ մեր թուարկութիւնից առաջ չորրորդ հազարամեակի երկրորդ կէսին: Այժմ Երեւանի տարածքի մէջ գտնուող Շէնգաւիթի, Միծեռնակաբերդի, Կարմիր Բլուրի պեղումներից յայտնաբերուել են հնագիտական հարուստ նիւթեղէն առարկաներ: Շէնգաւիթը հնագոյն կատարեալ կառուց է, որ նման է Միջագետքի, Պարսկաստանի (Պէրսէպոլիս), Փոքր Ասիայի (Տրոյա) քաղաքային համալիրներին:

1968 թուական, ով է ներկայ եղել ու մասնակցել Երեւանի հիմնադրման 2750 ամեակին, Արին Բերդի բլուրի ստորոտին ամբողջ քաղաքն էր խմբուել եւ աշխարհի չորս ծագերից պատուիրակներ բազում: Տօնախմբութիւնը թատերականացուած էր եղել, ծիրանափողերն են հնչում եւ բլուրի գագաթից նոյն ինքը՝ Տուշպա քաղաքի տէրը, Արարատեան թագաւորութեան գահակալ հզօր արքան՝ Արգիշտին, արեւը ափին մէջ, պեղումներից յայտնաբերուած սողաւորը գլխին, իր պահակախմբով իջնում է բլուրի աստիճաններից: Նրան դիմաւորում է քաղաքի աւագանին, հրապարակում գարկում են թմբուկները, պղնձեայ փողերն են աւետում արքայի գալուստը: Նրան շրջապատած պարախմբերը շուրջպար են բռնում, հրապարակում արքային ողջունող երեւանցիները ցնծում են, դղրդում է բլուրը: Հրապարակի վրայ բացուող փողոցների տների առաջ հիւրասիրութեան ճոխ սեղաններ, անցորդներն են շնորհաւորում իրենց քաղաքի ծնունդը: Եւ Երեւանցիք շարան-շարան բարձրանում են 2750 աստիճաններով բլուրի գագաթի արքայի պալատ, միայն վերջին աստիճանի՝ հասնող Երեւանցին կանչում է 2750, այսինքն աստիճաններ: Եւ իմացէք, որ այն թուականից յետոյ ամէն աշնան բլուրի նոյն հրապարակում քաղաքի ծնունդի տարելիցի տօնախմբութիւն է: Հայ տարագիր մարդ, եթէ կարօտաց սրտով ես վառուում, ինչու դու էլ չես գնում քու ոստանի ծնունդը շնորհաւորելու:

(Շարունակելի 4)

### ԹՈՒՐԲԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ


Շարունակում է էջ 6-էն

պատասխանատուներին ու նրանց պատասխանատուութեան ենթարկել: Իսկ ինչու էր այդ հարցով այդպէս մտահոգուած թուրքական իշխանութիւնը:

Որոշ հեղինակներ այն համարում են արդիւնք թուրքերի ապրած հիասթափութեան, բարոյագողափարական մակարդակի անկման արդիւնք: Ոչ միայն թուրքիան պարտուած էր, այլ կործանուած էր մի ամբողջ մեծ կայսրութիւն: Դաշնակիցները յայտարարել էին, որ իրենք մտադիր են մասնահատել կայսրութիւնը թողնել Սեւ Մովի հարաւային ափին մի փոքր տարածք: Այս վիճակը թուրքիայում ստեղծեց հիասթափուածների մի հոսանք: Միւս կողմից այն որոշակի խաւերին գրգռեց դէպի ապստամբութիւն, դէպի ազատագրական պայքար: Դրանք Մուսթաֆա Քեմալի հետեւորդները դարձան: Նոյն աղբիւրից ծնուած հիասթափուածների ու յեղափոխականների համախմբումները այս հարցում օգնեցին իրար: Հիասթափուողները ողբացին կայսրութեան կործանումը: Յեղափոխականները ձգտեցին ամէն կերպ փրկել հնարաւորը: Հիասթափուածները լացուկոծով ողբերգութիւնը հասցրին զանգուածների գիտակցութեան, որպէսզի ազգայնական տարրը այն աստիճանաբար վերածի բռնուցքի: Հիասթափական ճիչը օգտագործուեց որպէս դիւանագիտական-գաղափարախօսական գէնք: Մինչեւ Փարիզեան վեհաժողովը ընկած ժամանակաշրջանում կազմակերպուած թուրքական մի խումբ թուրքական քաղաքական թատերաբեմը լցրեց մեղաւորներ փնտռելու, դատապարտելու, պատժելու տեսարաններով: Այնտեղ դաշնակիցներին մատուցուած էր այն գաղափարը, որ թուրք ազգն իր մէջ

ունի այնքան բարոյական ոյժ, որ կարող է ինքն իրեն մաքրել: Ատեաններում մեղադրողները ոչ հայերն էին եւ ոչ էլ դաշնակիցների ներկայացուցիչներ, այլ իրենք թուրքերը: Այս դիւանագիտական ներկայացումը իր որոշակի ներգործութիւնը ունեցաւ Արեւմուտքի վրայ: Այն հայէս նպաստեց Քեմալական շարժման: Փարիզեան վեհաժողովից յետոյ այն կորցրեց իր գոյութեան իմաստը եւ թուրքիան ու իր դաշնակիցները մոռացան 1918-1920 դատաքննութիւնները: Թուրքիան մինչեւ օրս էլ չի ցանկանում լիչել, որ ինքը առաջինը ընդունել է 1915-18-ին թուրքերի կողմից կազմակերպուած հայերի ջարդը: Կարծես այսօր թուրքիայում նկատելի է դէպի «սուրբ անցալի աւանդութները» վերադառնալու ցանկութիւնը: Այս առումով շատ աւելի պատուաբեր ու գիտական կը լինէր եթէ իսթանպուլի համալսարանը աշխարհի գիտնականներին հրաւիրէր Օսմանեան խորհրդարանի առաջարկութեամբ, անձամբ Սուլթանի հրամանով ստեղծուած ու երկրի իրաւագիտական մտքի սերունդից կազմուած 1919-1920-ի թուրքիայի Ձիւնուորական Ատեանի վճիռները:

Սոյն փաստաթուղթի կարեւորութիւնը մեզ թելադրում է, որ յաճախակի կրկնուի նրա հրատարակութիւնը, այլեւ լոյս տեսնեն դրա թարգմանութիւնները տարբեր լեզուներով: Հեղինակը կարողացել է ընթերցողին տրամադրել գրքի երկրորդ բարելաւուած տարբերակը, Ակադեմիկոս Նիկոլայ Յովհաննէսեանի ուշադրաւ ներածականով: Յաւօք ենք արձանագրում այն փաստը, որ տուեալ խիստ կարեւոր փաստաթուղթը ցարդ ունի լոկ իր արաբերէն եւ անգլերէն տարբերակները: Արժանին պէտք է մատուցել նաեւ «Նոր Հայաստան» օրաթերթի խմբագիր Վահան Վահանեանին՝ գրքի հրատարակութեան համար:



 <p>ՀԱՅԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ</p>	 <p>ՀԱՅԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ</p>
<p>ԺՈՐԺ ՅԵՅՏՕ</p> <p><b>ՄԱՏԻ ՕՍԹԵՐՈՅ</b></p> <p>Կառավարչապետի 2 Օդար</p> <p>Բնակարան: ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿԱՆԵԱՆ</p>	

**Մարտ 4-ի Ներկայացումը կը հովանաւորէ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը Տոմսերը Ստանալու Ըամար Դիմել (818) 502-3233**









Nor Serount Cultural Association proudly presents



# Rising Stars of Gyumri

Նոր Սերունդ Մշակութային Միությունը և՛ր հովանաւորէ՛

## Գիւմրիի Պատանի Աստղերու

Ամերիկեան Հանրգային Շրջագայութիւնը



**Exclusive Engagement in L.A. For 1 Night Only!**

# Sunday, March 19, 2006 • 6:00 pm • Alex Theatre

216 N. Brand Blvd., Glendale, CA 91203

Ticket Prices \$20, \$30, \$40, & \$50

Available at: Alex Theatre • Chatryan Video • Abril Bookstore • Berj Bookstore • Berj Bookstores • Arax Press

For Free Delivery of Tickets Call 818/265-0506 or 818/482-6131

LOS ANGELES • HOUSTON • DALLAS • DETROIT • CHICAGO • NEW YORK